ԻՍԼԱՄԸ և ՆՐԱ ՀԱԿԱՌԱՍՍԱՅԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ,

ԲԻԼԵԼ ԻԲՆ ՌԱԲԱՀԻ, ԱՌԱՋԻՆ ԱՖՐԻԿԱՑԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

الإسلام ومكافحة التمييز العنصري

قصة الصحابي الجليل بلال بن رباح الحبشي رضي الله عنه – مؤذن الرسول صلى الله عليه وسلم باللغة الأرمينية

Հեղինակ

Դոկտոր Աբդուլ-Ռահմեն Էլ-Շիհա

د. عبد الرحمن بن عبد الكريم الشيحة

Թարգմանությունը

المركز الأوروبي للدراسات الإسلامية

EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)

& Աննա Ռ. Հակոբ

ԻՍԼԱՄԸ և ՆՐԱ ՀԱԿԱՌԱՍՍԱՅԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ,

ԲԻԼԵԼ ԻԲՆ ՌԱԲԱՀԻ, ԱՌԱՋԻՆ ԱՖՐԻԿԱՑԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Դոկտոր Աբդուլ-Ռահմեն Էլ-Շիհա

Թարգմանությունը

EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (E.I.R.C)

& Աննա Ռ. Հակոբ

Ստուգող հանձնաժողով:

Աբու Առամ

© *Գրքի բոլոր իրավունքները պատկանում են հեղինակին*

Դոկտոր Աբդուլ-Ռահմեն Էլ-Շիհա

Հեղինակը թույլատրում է վերատպել կամ կրկին հրատարակել գիրքը, եթե որպես նպատակ ծառայում է գրքի անվճար տարածումը, որի ընթացքում արգելվում է կատարել փոփոխություններ:

Վերոնշյալ կանոնները պահպանելու և անհրաժեշտության դեպքում հեղինակը պատրաստ է տրամադրել գրքի բարձրորակ կրկնօրինակներ էլեկտրոնային վիճակով:

بسم الله الرحمن الرحيم

ԱՄԵՆԱԳԹԱՍԻՐՏ և ՆԵՐՈՂԱՄԻՏ ԱԼԼԱՀԻ ԱՆՈՒՆՈՎ

Կար դարաշրջան , երբ թագավորում էր բռիությունը և անպատվությունը , որի արդյունքում երկրպագում էին կուռքերին , ուտում էին մահացածի միս ,, անում էին անվայել արարքներ , կտրում էին բարեկամական կապերը , այդ ժամանակ կար ռասսայական ճնշում , մարդիկ բաժանվում էին սոցիալական դասակարգերի, որոնցից յուրաքանչյուրը ուներ տարբերիչ գծեր և հատկություններ , այդ ժամանակ ուժեղը ճնշում էր թույլին , հարուստը աղքատին , մարդիկ դարձնում էին մյուսներին իրենց ստրուկները: Բայց այս կյանքը լուսավորվեց Մուհամեդի գալուստով , որի արդյունքը տարածվեց կրակի արագությամբ , որը այրում էր չորացած բույսերը : Նա (թող Ալլահը օրհնի նրան և ողջունի) իր կոչով կոտրեց գլխավորող հասկացությունները , որոնք գործում էին այդ ժամանակ , և հանդես եկավ քննադատելով շատ մարդկանց կրքերը և ցանկությունները : Մարգարե Մուհամեդը (թող Ալլահը օրհնի նրան և ողջունի), սկսեց թշնամանալ նրանց հետ , օգնելով ամեն մեկին , ով ոտնահարվում էր անարդար բռնակալի կողմից , ով առանց իրավունքի խժռում էր մարդկանց ունեցվածքը : Քանզի Նա (թող Ալլահը ողջունի և օրհնի նրան), եկավ Աստվածային Օրենքով Միաստվածության (Շարիաթ), որը կոչում է ազատել մարդկանց երկրպագելուց ոչ Ալլահին : Սրա արդյունքն է մարդու հոգու ազատումը ամեն տեսակի իշխանությունից , որը կարող էր ստրկացնել նրան :

Շարիաթի գլխավոր սկզբունքներից մեկն է դեմ կանգնել բռիությանը և արգելել բացահայտ և թաքուն նողկալի արարքները : Շարիաթը արգելում է անարդարությունը և նեղությունը , դատապարտում է ամեն տեսակի դասակարգային բաժանումները , որոնք գոյություն ունեին նախկինում հասարակության մեջ : Նաև դատապարտում է

առանձնացումը մաշկի գույնի , սեռի կամ ծագման հետ կապված: Շարիաթը դնում է մարդուն աստիճանի վրա , որը պահանջում է Ամենաբարձրյալ Ալլահը, այն է հարգանք : Այն նույնպես պաշտպանում է նրան նողկալի արարքներից և նվաստացումից , որոնք բերել էին մարդկության նախորդները : Շարիաթը նաև ընձեռնում է մարդուն նրա իրավունքը , որը վերցրել էին նրանից արյունախումները :

Մինչ մարգարեական առաքելությունը Ալլահի Մարգարեյի, (Խ.Ա.Ո.Ն), մարդը երկրպագում էր մարդուն , քարե հուշարձաններին կամ կտրած փայտերին , եղբայրը ճնշում էր եղբորը , առաջնորդվելով գոյություն ունեցող անարդար օրենքներով , լինի դա ֆինանսական կամ հասարակական հարաբերություններում : Դա ճնշում էր նրա ջանքերը և ոտնահարում էր արժանապատվությունը : Իսլամը հակառակ է բոլոր համակարգերին , որոնք տանում են ճնշման և հասարակության մասնատման սոցիալական դասերի : Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) եկավ և ասաց . « **Օ, մարդիկ , ճշմարիտ , ձեր Աստվածը Մեկն է , և ձեր հայրը – մեկը : Չկա ոչ մի առավելություն արաբի ընդեմ ոչ արաբի , և կարմիրը ընդեմ սևի , և սևինը ընդեմ կարմիրի , բացի աստվածավախությունից** : »[1] [2]

Բրահմայական – հնդուիստական « Սուրբ » գրքերը ասում են մի մարդկանց առավելությունների մասին մյուսների վրա , ըստ իրենց ծագման : Նրանք կարծում էին , որ « բրահման » ստեղծել է «բրահմա » (քրմերի) կաստան իր բերանից , « քշատրիեվների » (մարտիկների) կաստան իր արմունկից , « վայշի» (վաճառականների և արհեստավորների) կաստան իր սրունքից , իսկ (շուդրով) (ստրուկների և ծառաների) կաստան , իր ոտքերից : Նրանց գրքերը բաժանել են մարդկանց ֆունկցիաները ըստ այդ կաստաների , արտահայտելով նողկանք ցածր և ոչ լիիրավ մարդկանց , որոնք ըստ իրենց ,ստեղծված են սրունքից և ոտքերից : Նրանք համարվել են բնակչության ամենա ցածր դասը , նրանց հետ թույլ էր տրվում

[1] Ահմեդ, 5/411, Հադիթ 23536
[2] Ահմեդ, 2/361, Հադիթ 8721

համագործակցել միայն ծայրահեղ դեպքերում: Նրանք ստեղծվել էին որպեսզի միայն ծառայեն քրմերին:

Նույնպես հին հունական և հին հռոմեական փիլիսոփայությանն մեջ, համոզված էին, որ նրանք վերին ռասսա են, իսկ մյուս մնացած մարդիկ բարբարոսներ են: Այս տարանջատման մասին ասել է հին հույն փիլիսոփաներից մեկը, Արիստոտելը, պնդելով, որ «Աստվածները ստեղծել են երկու տեսակի մարդկանց. տեսակ, որը օժտված է գիտակցությամբ և կամքով: Դրանք հույներն էին, որոնք ստեղծված էին այնպիսի կատարյալ վիճակում, որ լինեն ժառանգներ Երկրի վրա և ղեկավարեն մյուս մարդկանց, և տեսակ, որը օժտված է միայն ուժեղ կազմվածքով և այն ֆունկցիաներով, որոնք ուղղակի կապված էին կազմվածքի հետ: Դրանք են բարբարոսները, այսինքն, բոլոր մարդիկ, բացի հույներից: Նրանց ստեղծել էին աստվածները այդ ոչ կատարյալ վիճակում, որ նրանք լինեն ստրուկներ, ենթարկվելու ընտրված շերտին:»[3]

Նույնպես հրեաները և քրիստոնյաները, մինչ Իսլամի գալը, համարում էին, որ նրանք հանդիսանում են ընտրյալ ժողովուրդ Բարձրյալից, որ նրանք ունեն հատուկ աստիճան, որը տարբերում է նրանց ուրիշ մարդկանցից: Ըստ այդմ, նրանք համարում էին իրենց առանձին ռասսա և դիտում էին ուրիշներին արհամարհանքով, անվանելով նրանց «գոյաներ»: Այս տերմինը նրանք օգտագործում են դեպի բոլոր ոչ հրեաները և այն նշանակում է «անհավատներ, կռապաշտներ, պիղծեր:» Իրենց կարծիքով, նրանք կարող են ստրկացնել և օգտագործել մյուսներին, քանզի նրանք հատուկ, հին ազգ են: Ամենաբարձրյալ Ալլահը բացատրել է այս Սուրբ Ղուրանում.

«Գրերի մարդկանց միջև, կա այնպիսին, ով կվերադարձնի քեզ լրիվ կանտար, եթե դու վստահես այն նրան, բայց կա և այնպիսին, ով, եթե դու վստահես նրան միայն մի դինար, չի վերադարձնը

[3] «Քաղաքականության Գիրքը» Արիստոտել

այն քեզ, մինչև դու չկանգնես նրա հոգու վրա: Նրանք այդպես են անում, որովհետև ասում են. « Մեր վրա մեղք չի լինի այս տգետության համար:» Նրանք դիտավորյալ զրպարտություն են անում Ալլահին:»[4]

Իբն Կասիրը այս այաթի բացատրության մեջ ասել է. « Այսինքն, այն ինչ բերել է նրանց Ճշմարիտի բացառմանը, նրանց խոսքերն են. Մեզ վրա չկա մեղք այս կյանքում և այն, որ անօրինաբար օգտագործենք տգետների ունեցվածքը, այսինքն արաբների, քանի որ, Ալլահը թույլատրել է այն մեզ:

Նրանք ենթադրում են, որ մյուս մնացած ազգերը հանդիսանում են ստորին ազգեր և Ալլահը ստեղծել է նրանց, որպեսզի լինեն ստրուկներ հրեաներին: Բայց Ամենաբարձրյալ Ալլահը բացահայտել է նրանց էությունը և այն, որ բոլոր մարդիկ հավասար են, նրանց միջև չկա տարբերություն և որ այն միայն հրեաների ցանկությունն է:»

« Հրեաները և քրիստոնյաները ասել են. « Մենք Ալլահի որդիներն ենք և Նրա սիրելիները:» Ասա. « Ի՞նչու ապա Նա տալիս է ձեզ տանջանք ձեր մեղքերի համար: Օ, ոչ: Դուք միայն մարդկանցից եք, որոնց Նա ստեղծել է: Նա ներում է ում ցանկանում է և տալիս է տանջանք, ում ցանկանում է: Ալլահին է պատկանում ուժը երկնքի վրա, երկրի և նրա, ինչ նրանց միջև է, և դեպի Նա է վերադարձը:»[5]

Այդպես նաև արաբները մինչ Իսլամը համարում էին իրենց ազգ, մարդկայնության օրինակ, իսկ մյուս ազգերին, կոչում էին « օտարերկրացիներ », պարզունակ ազգեր, անբավարար մարդկայնությամբ: Բայց Ալլահի Առաքյալը (Խ,Ո.Ա.Ն), բացատրեց նրանց իրենց համոզմունքի սխալը և հասկացության մոլորությունը, ասելով իր հետևորդներին.

[4] Ղուրան 3:75
[5] Ղուրան 5:18

« Եթե հավատքը կապված լիներ աստղին , ապա այն անմիջապես կվերցնեյին մարդիկ, ոչ արաբները, դարձնելով , որպես արդյունք , մյուս մարդկանց երջանիկ :»[6]

Մարդիկ լինում են տարբեր : Ամեն ոք ունի իր առանձնահատկությունը , որով օժտել է Ամենաբարձրյալ Ալլահը : Օրինակ , մարդկային բնավորությունը : Ամեն մարդու բնորոշ է ինչպես լավը . այնպես էլ վատը : Եվ սա Ադամի երեխաների տարբերիչ գիծն է , (իսկ ամբողջ կատարելությունը պատկանում է միայն Ալլահին), բացի մարգարեներից և առաքյալներից: (խաղաղություն լինի նրանց):

Այս լուսաբանումը թողեց մեծ հետք մուսուլմանների սրտերում և նրանք սկսեցին ցուցաբերել արդարություն մյուս մարդկանց և աջակցություն ըստ այս սկզբունքների : Ալ – Մուստավրիդ ալ- Քուրեյշին ասաց., գտնվելով Ամրա իբն ալ- Ասայի մոտ (թող Ալլահը գոհանա նրանցով). « Ես լսել եմ ինչպես Ալլահի առաքյալը (Խ.Ո.Ա.Ն) ասաց. « Ժամը չի գա , մինչ հռոմեացիները չեն լինի մեծամասնությունը մարդկանց :» Ամրն ասաց. « Նայիր թե ինչ ես ասում : » Նա ասաց. « Ես ասում եմ այն ինչ լսել եմ Ալլահի Առաքյալից :» Ամրն ասաց. « Եթե դու այդպես ես ասում, ապա դա փաստ է , քանի որ նրանք ունեն չորս հատկություն : Նրանք դրսևորում են համբերությունն ցնցումների ժամանակ և անմիջապես վերականգնվում են դժբախտությունից հետո և հարձակվում են պարտությունից հետո : Նրանք լավ են վերաբերվում աղքատներին , որբերին և թույլերին : Եվ իրենց հինգերորդ լավ հատկությունը այն է , որ նրանք դեմ են գնում թագավորների ճնշմանը :»[7]

Ալլահի Առաքյալը (Խ.Ա.Ո.Ն), եկավ , որ փոխի այդ ատելի դասակարգումը , քանզի ազատությունը հանդիսանում է Շարիաթի պոստուլատներից մեկը : Ընդհանուր ազատություն , ըստ Շարիաթի

[6] Բուխարի
[7] Մուսլիմ, Հադիթ 2889

օրենքների , որոնք կիրառում էին ճշմարիտ խալիֆները Մարգարեյից (Խ.Ա.Ո.Ն) հետո : Նրանք չէին բաժանում ղեկավարի և ենթակայի , հարուստի և աղքատի միջև:

Անաս իբն Մալիքը (թող Ալլահը գոհանա նրանով), ասաց. « Մի անգամ , մի մարդ Եգիպտոսից , եկավ Օմար իբն ալ- Խատաբի մոտ և ասաց. « Օ, հավատացյալների կառավարիչ . ես գալիս եմ քեզ մոտ պաշտպանության անարդարությունից :» Օմարը (թող ալլահը գոհանա նրանով), պատասխանեց . « Քեզ տրվում է պաշտպանություն :» Տղամարդը ասաց. « Ես հաղթել եմ մրցույթում Ամրա իբն ալ- Ասիի որդուն (որը հանդիսանում էր Եգիպտոսի կառավարիչ): Այսպես , ես հաղթեցի նրան և նա ինձ դրա պատճառով ծեծեց մտրակով , ասելով . » Ես հանդիսանում հարգալիցի որդի : »

Որից հետո Օմարը ,(թող Ալլահը գոհանա նրանով), գրեց Ամր իբն ալ- Ասին (թող Ալլահը գոհանա նրանով), հրամայելով նրան և որդուն գալ իր մոտ : Նրանք ժամանեցին : Օմարը (թող Ալլահը գոհանա նրանով), ասաց. « Որտե՞ղ է եգիպտացին : Վերցրու մտրակը և մտրակիր :» Եգիպտացին վերցրեց մտրակը և սկսեց նրան մտրակել , իսկ Օմարը (թող Ալլահը գոհանա նրանով), ասաց. « Խփիր հարգարժանի որդուն :»

Հետո Անասը ,(թող Ալլահը գոհանա նրանով), շարունակեց . « Նա ավարտեց ծեծը : Եվ երդվում եմ Ալլահով , մեզ դուր էր գալիս , որ նա նրան ծեծում է : Այդ մարդը դադարեց ծեծել միայն երբ մենք համոզվեցինք , որ նեղացնողը ստացավ ամենը :»

Հետո Օմարը (թող Ալլահը գոհանա նրանով) ասաց եգիպտացուն . « Դիր այս մտրակը Ամրի ճաղատին :» Որին եգիպտացին պատասխանեց . « Օ, հավատացյալների կառավարիչ , ինձ ծեծել է նրա որդին , ոչ թե նա : Եվ ես արդեն լիովին վճարել եմ նրան : » Օմարը (թող Ալլահը գոհանա նրանով), ասաց. « Երբվանի՞ց են այս մարդիկ ձեզանից արել ստրուկներ : Չէ որ ձեր մայրերը ծնել են ձեզ ազատ :» եգիպտացին պատասխանեց .« Օ, հավատացյալների կառավարիչ, ես չգիտեմ , նա չի արել այդ ինձ հետ :»

Այս կոչ է հավասարության բոլոր մարդկանց նկատմամբ և հավասարություն դիրքի իր եղբոր հետ, չնայած նրանց տարաձայնությունների: Քանի որ նրանք, ըստ իրենց մարդկային հիմքի, արարածներ են և նրանց արարումը մեկն է. տղամարդիկ և կանայք, սևամորթ և սպիտակամորթ, արաբներ և ոչ արաբներ: Այս կոչով է եկել Սուրբ Ղուրանը, իսկ Ալլահի Առաքյալը (Խ.Ա.Ո.Ն), հասցրեց նրանց դա:

« **Օ, մարդիկ, Վախեցեք ձեր Աստծոց, Ով արարել է ձեզ մի մարդուց, նրանից արարել է զույգ և տարածել է շատ տղամարդ և կին, որոնք եկել են նրանցից: Վախեցեք Ալլահից, որի անունով դուք խնդրում եք և վախեցեք կտրել բարեկամական կապերը:** »[8]

Այսպիսով, ամբողջ մարդկության հիմքը և նրա զարգացումը մեկն է, ինչպես նաև նրա սկզբնաղբյուրը մեկն է, դա Ադամն է (խաղաղություն նրան): Բարձրյալ Ալլահը պարզ բացատրեց այն ասելով.

« **Ճշմարիտ, Հիսուսը Ալլահի մոտ նման է Ադամին: Նա արարել է նրան փոշուց և հետո ասաց նրան « Եղիր », և այն առաջացավ** :»[9]

Հետո Բարձրյալը դարձրեց Ադամին (խաղաղություն նրան), հիմք բազմանալու և տարածելու սերունդներ ամբողջ երկրի վրա: Բարձրյալը ասաց.

« **Նրա նշաններից է այն, որ Նա արարել է ձեզ երկրից: Դրանից հետո, դուք դարձաք մարդկային ցեղ և տարածվեցիք** :»[10]

Այսինքն ամբողջ մարդկությունը առաջացել է մի մորից և հորից: Եվ չկա ոչ մեկին առավելություն մյուսի վրա, դիտարկելով նրանց հիմքը և ծագումը: Քանի որ, առաջին մարդը, որին ստեղծել է Ալլահը, Ադամն էր (խաղաղություն լինի նրան), ամբողջ

[8] Ղուրան 4:1
[9] Ղուրան 3:59
[10] Ղուրան 30:20

մարդկության հորը , հետո Ալլահը ստեղծեց նրանից իր կնոջը , Եվային, ամբողջ մարդկության մորը , հետո բոլոր մարդիկ առաջացան նրանցից երկուսից : Եվ այսպես կշարունակվի այնքան ժամանակ , մինչ Բարձրյալը չի թույլատրի ամեն գոյություն ունեցող արարածի մահանալ և չի գա Դատաստանի Օրը :

Ի՞նչու ապա, մեկը ցուցադրում է մեծամտություն մյուսին և նվաստացնում է , անհարգալից է վերաբերվում նրան , ստրկացնում է , չնայած նրանցից յուրաքանչյուրը ստեղծվել է նույն հիմքից : Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « **Ճշմարիտ , Բարձրյալ Ալլահը հանել է ձեզանից հպարտությունը պարծենկոտության , տգիտության ժամանակվա , որում ապրել են ձեր հայրերը : Հավատացյալը հանդիսանում է աստվածավախ, իսկ անհավատը , դժբախտ : Բոլոր մարդիկ Ադամի երեխաներն են , իսկ Ադամը կավից** :»[11]

Բարձրյալ Ալլահը ասաց.

« **Մարդիկ միասնական հավատացյալների համայնք էր , բայց ընկան տարաձայնության մեջ: Եվ եթե առաջ չլիներ քո Տիրոջ Խոսքը , ապա նրանց տարաձայնությունները հարթված կլինեին** :»[12]

Բոլոր մարդկանց հիմքը , ովքեր ապրել են առաջ և ովքեր կապրեն հետո, նույնն է: Նրանց սկիզբը եղել է մի կրոն , մի լեզու : Բայց ըստ բազմացման և տարածման նրանց քանակի , նրանք հեռացան երկրի հեռավոր անկյուններ , որի արդյունք եղան լեզվական տարբերություններ , բնավորությունների և մաշկի գույների տարբերություններ : Սա անխուսափելի անխուսափելի արդյունք է հասարակության ազդեցության նրանց վրա և այս տարբերությունները առաջանում են կապված մտածելակերպի , համոզմունքների և կյանքի հետ : Այդ իսկ պատճառով Ալլահը ուղարկեց նրանց մոտ առաքյալների , որ նրանք վերադարձնեն մարդկանց իրենց հիմքի և նախաղբյուրի, որ Միակ Ալլահին

[11] Ահմեդ 2/361, Հադիթ 8721
[12] Ղուրան 10:19

երկրպագելն է, նրան որևէ գործընկեր տալը: Ամենաբարձրյալ Ալլահը ասում է.

«Մենք ուղարկել ենք ամեն համայնքի առաքյալի. «Երկրպագեք Ալլահին և խուսափեք Տագութից:» Նրանց մեջ կան այնպիսիներ, որոնց Ալլահը դրել է ճիշտ ուղղու, և այնպիսիներ, որոնց արդարաբար կանխորոշված էր մոլորություն: Քայլեք երկրով և տեսեք, ինչպիսին էր անհավատների ավարտը:»[13]

Ճշմարիտ Իսլամը ուշադրություն չի դարձնում մարդկանց արտաքին տեսքին, քանի որ Ալլահի Առաքյալը (Խ.Ա.Ո,Ն), ասաց. «Երբեմն մազակալած, փոշոտ մարդը, որը հագած է ցնցոտիների, որից մարդկանց աչքերը թեքվում են, երդվում է Ալլահով, և (Ալլահը) անմիջապես տալիս է նրան (այն, ինչ նա խնդրում է):»[14]

Եվ երբ գտնվում են մարդիկ, ովքեր օգտագործում են այդ տարաձայնությունները մարդկանց միջև ըստ մաշկի գույնի, ծագման կամ սեռի, ապա անպատճառ, գալիս են այդ ատելի կաստայականության, որի դիմաց Իսլամական Շարիաթը փակում է բոլոր ճանապարհները: Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն), բացատրել է մաշկի գույնի տարբերությունը մարդկանց մոտ, նրանց խառնվածքը և բնավորությունները ասելով.

«Ճշմարիտ, Ամենաբարձրյալ Ալլահը արարել է Ադամին փոշուց, որը Նա վերցրել է ամբողջ երկրից: Եվ հայտնվեց մարդ, համապատասխան երկրին, որից ստեղծվեց կարմիր, սև, սպիտակ և դեղին: Եվ նրանց մեջ կան փափուկ, տխուր, վատ և լավ:»[15]

Բոլոր մարդիկ, չնայած իրենց սեռի, մաշկի գույնի, լեզվի կամ հայրենիքի նույնն են: Բոլորը հավասար են Ալլահի ն առջև և տարբերվում են միայն մի բանում, որը կայանում է տարբերություն նրանց միջև, որն է մոտիկ կամ հեռու լինելը Շարիաթի օրենքների

[13] Ղուրան 16:36
[14] Մուստադրակ ալե աս-Սահիհեյն, 4/364
[15] Սահիհ Իբն Հաբբեն, 14/29, Հադիթ 6160

օգտագործմանը, որը բարիք է նրանց և հասարակարգի համար: Ամենաբարձրյալը ասում է.

«**Օ, մարդիկ, ճշմարիտ, Մենք ստեղծել ենք ձեզ տղամարդկանցից և կանացից և արել ենք ձեզ ազգեր և ցեղեր, որ դուք ճանաչեք իրար, և ամենահարգարժանը Ալլահի առջև ձեր միջից, ամենաաստվածավախերն են: Ճշմարիտ, Ալլահը Իմաստուն, և Իմացյալն է:**»[16]

Այսպիսով, Ալլահը արել է ձեզ ազգեր և ցեղեր, որ մեկը մյուսից բարձր չդասի, այլ որ այն պատճառ դառնա իրար ծանոթանալու և տարբերելու: Ինչպես ամեն մարդ ունի իր անձնական անունը, որը տարբերվում է մյուսից:

«**Մենք պատվել ենք Ադամի որդիներին և թույլ ենք տալիս նրանց տեղաշարժվել ցամաքում և ծովում: Մենք պարգևել ենք նրանց բարիք և նվիրել ենք նրանց բացահայտ առավելություն ուրիշ արարածների վրա:**»[17]

Այս գերադասումը ընդհանուր է, բոլոր մարդկանց համար առանց բացառության: Մի սեռը լավը չէ մյուսից և մի խումբը լավը չէ մյուսից: Ամենաբարձրյալն ասում է.

«**Նա, Այն Ոքն է, Ով դարձրել է ձեզ ժառանգորդներ երկրի վրա և բարձրացրել է մեկին ուրիշների վրա աստիճաններով:**»[18]

Բոլոր մարդիկ առանց բացառության, ստեղծվել են Ալլահին երկրպագելու համար, տարածվելու Երկրի վրա և կատարելու պարտավորվածությունը, որոնք բացահայտել է ամենաբարձրյալ Ալլահը այս այաթում: Եվ նաև արել է տարբերություն իրենց հարստության, բարոյականության, գեղեցկության մաշկի գույնի և արտաքին տեսքով: Նա չի արել այս տարբերությունները հիմնված ծագման վրա, ինչպես ասում է Ղուրանը:

---

[16] Ղուրան 49:13
[17] Ղուրան 17:70
[18] Ղուրան 6:165

« Մենք բաժանել ենք իրենց միջև իրենց գոյության ձևերը աշխարհիկ կյանքում և բարձրացրել ենք մեկը մյուսից ըստ աստիճանների, որ որոշները վերցնեն իրենց մոտ ծառայության ուրիշներին : »[19]

Հիմնվելով դրանով, այն հավասարությունը, որը հաստատում է Իսլամը և որի տեսակետից բոլոր մարդիկ հավասար են առանց բացառության, դա է.

- Պահպանել օրինական իրավունքներ ամեն մարդու, և առանձնակի կախված նրա սեռի, ծագման, մաշկի գույնի և իրացունքով օգտվել կազմակերպված ազատությունից : Նրա կազմակերպիչն է հանդիսանում կրոնը, որը հանում է նրան կատարյալ անասնական ազատությունից, որը ճաշակում է ժամանակակից աշխարհը : Նրա խանր արդյունքներն են արատների տարածումը և բանտերը, լցված բարոյական, տնտեսական և հասարակական հանցագործություններով և այլն : Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Բոլոր մարդիկ հավասար են, ինչպես սանրի ատամները :»
- Բոլոր մարդիկ հավասար են Շարիաթի օրենքների դիմաց, և չկա ոչ մի տարբերություն նրանց սեռերի տեսանկյունից, ծագումից և մաշկի գույնից: Ամենաբարձրյալ Ալլահը ասաց. « Ճշմարիտ, Ալլահը հրամայում է ձեզ վերադարձնել վստահված պահպանության ունեցվածքը իր տիրոջը և դատել արդարորեն, երբ դատում եք մարդկանց մեջ : Ինչ լավ է այն, ինչ տեղեկացնում է ձեզ Ալլահը : Ճշմարիտ Ալլահը Լսող և Տեսնող է : »[20]

Իսկ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Օ, մարդիկ, Ճշմարիտ նրանց, ովքեր եղել էին ձեզանից առաջ, կործանել է այն, որ երբ գողանում էր նրանցից հայտնին, ապա նրանք թողնում էին նրան, իսկ երբ գողանում էր նրանց միջի թույլը, ապա պատժում էին : Երդվում եմ Ալլահով, եթե Ֆաթիման,

[19] Ղուրան 43:32
[20] Ղուրան 4:58

Մուհամեդի դուստրը գողանա, ապա անպայման կկտրեմ նրա ձեռքը :»[21]

Նույպես նրանք հավասար են պատասխանատվության տեսանկյունից և հատուցման և պարգևի : Ամենաբարձրյալ Ալլահը ասում է.

« Նա, ով արել է բարիք մի ատոմի քաշի, կտեսնի այն : Եվ նա, ով արել է չարիք մի ատոմի քաշի, կտեսնի այն :»[22]

>Նույնպես նրանք հավասար են համամարդկային արժանապատվության տեսանկյունից : Ոչ ոքի չպետք է պատճառել տառապանք ըստ իրենց մաշկի գույնի, սեռի, հավատքի : Ամենաբարձրյալ Ալլահը ասաց.

« Մի նեղացրեք նրանց, ում նրանք կոչում են բացի Ալլահից, այլապես նրանք կսկսեն վիրավորել Ալլահին թշնամությունից և անգիտությունից ելնելով : Այսպես Մենք զարդարել ենք ամեն ազգի համար իր արարքները : Հետո նրանք պիտի վերադառնան իրենց Տիրոջ մոտ, և Նա կբացահայտի նրանց այն, ինչ նրանք արել են : »[23]

- Նույնպես նրանք հավասար են կյանքի խորհրդավորության, ունեցվածքի և պատվի տեսանկյուններից : Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Ճշմարիտ ձեր արյունը և ձեր ունեցվածքը, և ձեր պատիվը սուրբ են, այնպես ինչպես այս օրվա խորհրդավորությունը, այս ամսվա, և այս վայրի : Ուրեմն թող ներկան փոխանցի բացակային: Քանի որ կարող է լինել այնպես, որ ներկա գտնվողը կփոխանցի նրան, ով ավելի լավ կհասկանա քան նա :»[24]
- Նույնպես նրանք հավասար են հասարակությունում ղեկավար պաշտոն ունենալու տեսանկյունից, որը հիմնված է արժանիքների, հնարավորությունների և բավարարվածության վրա : Ուդեա ալ- Քինդին փոխանցում է, որ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Օ, մարդիկ .Նա ձեզանից, ով արել է մեզ

[21] Մուսլիմ
[22] Ղուրան 99:7-8
[23] Ղուրան 6:108
[24] Բոխարի 1/37

համար որևէ գործ, և մենք թաքցրել ենք նրանից նույնիսկ ասեղ կամ այն, ինչ ավելի է դրանից, ապա այն կլինի շատ թանկ Դատաստանի Օրը:» Եվ այդ ժամանակ վեր կացավ սնամորթ տղամարդ, որին կարծես ես հիմա տեսնում և մտածում եմ, որ նա անսարներից է, որը ասաց. « Ընդունիր ինձանից քո գործը, Օ, Ալլահի Մարգարե:» Նա (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց. « Եվ ի՞նչ գործ է դա:» Տղամարդը ասաց. « ես լսել եմ թե դու ինչպես ես առաջ ասել, այն, ինչ հիմա ասեցիր:» եվ Նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Եվ հիմա ասում եմ նույնը. ով, ում աշխատանքով մենք օգտվել ենք, թող գա նրանց մոտ փոքր քանակով նրա, կամ մեծ: եվ այն, ինչ նրան հասնում է, թող վերցնի, իսկ այն, ինչ նրանը չէ, թող թողնի:»[25]

- Նույնպես նրանք հավասար են Ալլահի տրվածից շրջակա միջավայրի օգտագործման տեսանկյունից: Ամենաբարձրյալ Ալլահը ասում է.

  « Օ, Մարդիկ, Համտեսեք երկրի վրա այն, ինչ թույլատրելի և մաքուր է, և մի հետևեք սատանայի հետքերին: Ճշմարիտ, նա փեզ համար բացահայտ թշնամի է:»[26]

- Նույնպես նրանք հավասար են Միակ Ալլահին երկրպագելուն, որը չունի գործընկեր: Քանզի Իսլամը ուղարկվել է ամբողջ մարդկության համար, որոնք ունեն մաշկի տարբեր գույներ, սեռեր և ծագում: Բոլորը Ալլահի ստրուկներն են: Ամենաբարձրյալը ասում է.

  « Օ, մարդիկ. Երկրպագեք ձեր տիրոջը, Ով արարել է ձեզ և նրանց, ովքեր եղել են ձեզանից առաջ, միգուցե դուք կվախենաք:»[27]

  Բացի դրանից, Մարգարեյի(Խ.Ա.Ո.Ն) Շարիաթը փոխեց այն ամենը, ինչ հանգեցնում է զզվելի ռասսայական ֆանատիզմի կամ նույնիսկ ակնարկում է այն: Փոխանցված է, որ Աբու Ուկբան (թող Ալլահը գոհանա նրանով), ազատ արձակված

[25] Սահիհ Իբն Հաբբեն 11/469
[26] Ղուրան 2:168
[27] Ղուրան 2:21

պարսիկների միջից , ասաց. « Ես ներկա էի Ալլահի Մարգարեյի(Խ.Ա.Ո.Ն) հետ Օհոդ ճակատամարտում : Եվ խփեցի բազմաստվածների մի մարդու ասելով. « Ստացի այս ինձանից : Ես երիտասարդ պարսիկ եմ ,« և հետո թեքվեցի Ալլահի Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) , որին նա ասաց. . « **Օ, եթե դու ասեյիր .« Ստացիր այդ ինձանից , չէ որ ես անսար երիտասարդ եմ** : »»[28]

Մենք տեսնում ենք , թե ինչպես Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) բնութագրում է նրա պատկանելությունը անսարներին և դա սիրելի էր նրա համար , քան պատկանել պարսիկներին, չնայած դա եղել էր նրա իսկական ծագումը և չէր արգելվում դասել նրան նրանց : Բայց Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց դա հոգալով նրա մասին , որ ընկերությունը և անձեռնպահությունը արտահայտվում է կրոնից , և փորձում է հեռացնել նրան ամեն մեծամտությունից կապված ազգայինի հետ :

Ծագումը և արտաքին տեսքը չի հանդիսանում չափանիշ Իսլամում : Ճշմարիտ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ցուցաբերել է սեր և հավանություն Սուհեյբ առ- Ռումիին և Բիլել իբն Ռաբահին , որը դրդեց նրան (Խ.Ա.Ո.Ն) ասել. « **Նա մարդ է , ով Դրախտի բնակիչ է** :» Նույնպես դեպի Սալման ալ –Ֆարսիին , որը հանդիսանում էր բնիկ պարսիկ , որը դրդեց նրան (Խ.Ա.Ո.Ն) ասել . « **Սալմանը մեզանից է , իմ ընտանիքից** :»

Միևնույն ժամանակ , Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) արտահայտել է մեծ բարկություն , ատելություն և թշնամություն իր հորեղբորը , Աբու Լեհեբին, որի պատճառով Ալլահը ուղարկեց սուրա , որը կկարդացվի մինչև Դատաստանի Օրը : Այնտեղ նրան խոստացված է տանջալից պատիժ : Ալլահն ասում է .

« **Թող նրա ձեռքերը լինի փոշոտ (թող բոլոր նրա արարքները լինեն անօգուտ) ,և ինքն էլ կորած է : Չի փրկի նրան իր հարստությունը և այն ինչ նա ձեռք է բերել (դիրք**

[28] Աբու Դաուդ 4/332

հասարակությունում և երեխաներ)։Նա կընկնի բոցավառ կրակը։»[29] Եվ մենք բոլորս գիտենք, որ ծագման տեսանկյունից նա հայտնի մարդկանցից մեկն էր. արաբ, քուրեյշ և իր ցեղի առաջնորդը։

Սուրբ Ղուրանում մեզ ցույց է տրված մուսուլմանների առաջին սահմանադրությունը, որը ուղարկվել է բոլոր մարդկանց համար։ Իմաստուն Լուկմանի անունը, որը եթովպացի սևամորթ ստրուկ էր, որին Ալլահը նվիրեց իմաստություն և որի պատճառով մի ամբողջ սուրա ուղարկվեց, որը կոչվեց նրա անունով։ Այնտեղ նա գովաբանվում է և նշվում է նրա արժանի հատկությունները, որոնք ոչ մեկ անգամ են երևում Ղուրանի շատ սուրաներում, որոնք անվանված են այս կամ այն մարգարեների և Ալլահի առաքյալների, և սուրբերի անուններով։ Օրինակ, «**Նոյ**», «**Իբրահիմ**», «**Իմրան Ընտանիքը**», «**Մարիամ**», «**Հովսեփ**», «**Յունես**», «**Մուհամեդ**» սուրաները և այլն։ Մուսուլմանները կարդում են այս սուրաները ամեն օրվա աղոթքներում. առավոտյան և գիշերը։ Եվ այս ամենը նրա համար, որ հասցնեն կատարելության հավասարության սկզբունքը մուսուլմանների սրտերում ուրիշ մարդկանց միջև և որ այս հարցի հասկացությունը շարունակվի։

Եթովպիան աֆրիկյան երկիր է, որի բնակիչների մեծամասնությունը սևամորթներ են։ Իր կոչի սկզբում Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հրամայեց իր հետևորդներին վերաբնակվել այնտեղ, այն պատճառով, որ նրանց տանջում էին քուրեյշները։ Նա ասաց. «Ճշմարիտ, այնտեղ այնպիսի թագավոր է, ով ոչ ոքի չի ճնշում։»

Երբ վախճանվեց Եթովպիայի Նեգուս թագավորը, Ալլահի մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Աղոթեք նրա համար և հոգեհանգստի աղոթքը», որին հետևորդները ասացին. «**Աղոթել եթովպացի ստրուկի համա՞ր**», և այդ ժամանակ Ամենաբարձրյալ Ալլահը ուղարկեց այաթ.

«Ճշմարիտ, Գրերի մարդկանց մեջ, կան այնպիսիններ, ովքեր հավատում են Ալլահին և այն բանի, որը ուղարկվել է ձեզ և ինչը

[29] Ղուրան 111:1-3

ուղարկվել է նրանց , լինելով հնազանդ Ալլահին և չեն վաճառել նշանները Ալլահի չնչին արժեքով :»[30]

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Խնդրեք Ալլահին թողություն ձեր եղբոր համար «, և հետո հավասարեցրեց աղոթողների շարքերը , որից հետո փառաբանեց Ալլահին քառակի , « Ալլահու Աքբար » բառերով :»[31]

Հավասարության կոչի սկզբունքը Իսլամում միայն հույս կամ խոսակցություն չէր , որով եկել էր Ալլահի Առաքյալը (Խ.Ա.Ո.Ն): Նա (Խ.Ա.Ո.Ն) գործնականորեն իրագործեց այս սկզբունքը իր ժողովրդի մեջ : Օրինակ , Ուսամա իբն Զեյդը (թող Ալլահը գոհանա նրանով), Ալլահի Առաքյալի կողմից ազատվածը (թող Ալլահը գոհանա նրանով), և որդին ստրկությունից ազատված, շատ սև էր , դուրս ընկած քթով , բայց Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն), միշտ վերցնում էր նրան և իր թոռանը , Հասանին, իր դուստր Ֆաթիմայի որդուն (թող Ալլահը գոհանա նրանով), ասելով . « Օ, Ալլահ , սիրիր նրանց երկուսին , քանզի ,իսկապես ես սիրում եմ նրանց : »[32]

Ավելին , Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) հետաձգեց ելքը Առաֆաթից հաջի ժամանակ , որը կապված էր երկրպագության և մուսուլմանների գործերի հետ , Ուսամայի պատճառով , որին Նա (Խ.Ա.Ո.Ն) սպասում էր : Եվ նա (թող Ալլահը գոհանա նրանով) եկավ , որին Յեմենի բնակիչները ասացին . « Եվ մենք նստել էինք սրա պատճառո՞վ:» Ավելի ուշ այս մաչդիկ Իսլամից ետ կանգնեցին , այսինքն կրոնից հրաժարվելու ժամանակները :[33]

Աիշան (թող Ալլահը գոհանա նրանով), Ալլահի Առաքյալի (Խ.Ա.Ո.Ն) կինը ասաց. « Ոչ ոքին թույլատրված չէր ատել Ուսամայի այն բանից հետո , երբ նա լսել է Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) խոսքերը. «Ով սիրում է Ալլահին և Նրա Առաքյալին , թող սիրի Ուսամային :»

---

[30] Ղուրան 3:199
[31] Բուխարի 1/466
[32] Բուխարի
[33] Սիեր Ալաեմ Ալնուբալաէ 2/500

Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) խոսքերին միշտ հետևում էր գործերը : Աիշան (թող Ալլահը գոհանա նրանով), ասաց. « Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ցանկանցավ մաքրել փոքրիկ Ուսամայի քիթը և Աիշան ասաց. « Թող , ես այդ կանեմ «, որին Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Օ, Աիշա , սիրիր նրան , քանզի ես սիրում եմ նրան «:

Ավելին , Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) Ուսամային դարձրեց մուսուլմանների բանակի հրամանատար ընդդեմ հռոմեացիների , չնայած նա հանդիսանում էր սևամորթ ազատ արձակված ստրուկ :Այդ բանակում կային արժանի և հանճարեղ հետևորդներ : Ոմնաք հետևորդներից (թող Ալլահը գոհանա նրանցով), համարեցին դա չափից ավելի Ուսամայի հանդեպ և սկսեցին խոսել այդ մասին : Երբ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) այդ մասին , ապա բարձրացավ մինբարի (հոգևոր առաջնորդի կանգնելու տեղը), վրա փառաբանեց Ալլահին և ասաց.« **Եթե դուք վարկաբեկում եք նրա դիրքը ինչպես հրամանատար , ապապ, այդպիսով , վարկաբեկում եք հրամանատարի դիրքը նրա հոր , իրենից առաջ : Եվ երդվում եմ Ալլահով , եթե նա լիներ համապատասխան , ապա կլիներ արժանի հրամանատարի կոչման , իսկ եթե նրանք եղել են ինձ համար սիրելի մարդկանցից , նկատի ունենալով Զեյդ իբն Հարիսին , Ուսամայի հորը , ապա այս մարդը ինձ համար ավելի սիրելի է նրանից հետո** :»[34]

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) մահացավ , մինչ Ուսամա իբն Զեյդի բանակը առաջացավ հռոմեացիների դեմ պայքարի , բայց մինչ այդ նա (Խ.Ա.Ո.Ն) ասում էր .« **Ուղարկեք Ուսամայի ջոկատը , ուղարկեք Ուսամայի ջոկատը** .....»

Մարգարեյի մահից հետո (Խ.Ա.Ո.Ն) Աբու Բաքրը (թող Ալլահը գոհանա նրանով), գլխավորեց Խալիֆությունը ըստ Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) կտակի : Օմար իբն ալ- Խատաբը (թող Ալլահը գոհանա նրանով), ասաց Աբու Բեքրին (թող Ալլահը գոհանա նրանով), « Ճշմարիտ , անսարները համարում են , որ բանակը պիտի գլխավորի մարդ , ով մեծ է Ուսամայից :» Որին Աբու Բեքրը (թող Ալլահը

[34] Բոէխարի և Մուսլիմ

գոհանա նրանով) բարկացավ և ասաց. « Թող զրկվի քեզանից քո մայրը , օ ալ- Խատաբի որդի : Նրան նշանակել է ինքը Ալլահի Առաքյալը (Խ.Ա.Ո.Ն), իսկ դու կոչում ես ինձ փոխե՞լ նրան : Երդվում եմ նրանով , ում ձեռքերում է իմ հոգին , եթե ես իմանայի , որ վայրի կենդանիները կխժռեն ինձ , ապա միևնույնն է կուղարկեյի Ուսամայի ջոկատը : »

Եվ դուրս եկավ երիտասարդ սևամորթ հրամանատար Ուսաման իր բանակով Մեդինայից : Աբու Բեքրը (թող Ալլահը գոհանա նրանով), դուրս եկավ ուղեկցելու նրան : Երբ Ուսաման հեծնեց ձին , ապա Աբու Բեքրը (թող Ալլահը գոհանա նրանով), մոտեցավ նրա ոտքերին : Ուսաման ամաչեց այդպիսի իրավիճակից և ասաց Աբու Բեքրին (թող Ալլահը գոհանա նրանով), « Օ , Ալլահի Մարգարեյի փոխանորդ (թող Ալլահը օրհնի և ողջունի նրան), Երդվում եմ Ալլահով , կամ դու կհեծնես ձի, կամ ես կիջնեմ ձիուց :» Ինչին Աբու Բեքրը (թող ալլահը գոհանա նրանով), պատասխանեց.« Երդվում եմ Ալլահով , դու չես իջնի ձիուց , և ես չեմ հեծնի այն , քանզի իմ ոտքը չի փոշոտվել Ալլահի Ճանապարհի համար նույնիսկ մեկ ժամ :»

Հետո Աբու Բեքրը (թող Ալլահը օրհնի նրան), խնդրեց թույլտվություն Ուսամայից , որ Օմարը (թող Ալլահը օրհնի նրան), մնա նրա հետ Մեդինայում , որ օգնի նրան կառավարել պետությունը : Այսպիսով , մեզ ցույց է տրվում օրինակ այն բանի , որ պետք է թույլտվություն խնդրել գլխավոր հրամանատարից , նույնիսկ եթե նա փոքր է տարիքով :

Հավասարության սկզբունքը Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) սկսում էր իրագործել իրենից : Չնայած Նա (Խ.Ա.Ո.Ն) ծագմամբ լավագույնն էր , իսկ նրա բարեկամները ամենահարգալից բարեկամները , իր ցեղը արաբների միջի լավագույնը , որը ուներ դիրք , որը ոչ ոք չի ժխտում , չնայած դրան Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « **Մի փառաբանեք ինձ այնպես , ինչպես քրիստոնյաները փառաբանում**

են Հիսուսին, Մարիամի որդուն, ճշմարիտ, ես միայն ստրուկ եմ: Այնպես որ ասեք «Ալլահի ստրուկ և Նրա Առաքյալ:»[35]

Ավելին, Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ամուսնացրեց իր հորաքրոջ աղջկան, Զեյնաբ բենթ Ջահշին, ստրկությունից ազատված Զեյդի հետ:

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն), միշտ անում էր ամեն ինչ, ինչ ի վիճակի էր, որ այս վեհ սկզբունքները Իսլամական Շարիաթի, լինեն առաջնային իր հետևորդների սրտերում: Այս տեղի է ունենում նրանց մասին հոգալով, առանց տարբերություն դնելու: Աբու Հուրեյրան (թող Ալլահը գոհանա նրանով), ասաց. «Սևամորթ աղջիկ կամ տղա գալիս էին մզկիթ, իսկ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) միշտ հետաքրքրվում էր նրանց գործերով:» Մի անգամ Նա (Խ.Ա.Ո.Ն) հարցրեց ինչպես են նրանք: Նրան պատասխանեցին. «Մահացել են», որին Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Ի՞նչու ինձ այդ մասին չեք հաղորդել:» Կարծես նրանք դրան կարևորություն չեն տվել: Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Ցույց տվեք ինձ նրանց գերեզմանները:» Նրան ցույց տվեցին և Նա (Խ.Ա.Ո.Ն) աղոթեց նրանց համար և ասաց. «Ճշմարիտ, այս գերեզմանները լցված է մթությամբ նրա բնակիչների համար, բայց Ամենաբարձրյալ Ալլահը կլցնի այն լույսով իմ աղոթքների շնորհիվ նրանց համար:»[36]

Նրանք վերցնում էին նրանից (Խ.Ա.Ո.Ն) ասկետիզմի օրինակ այս աշխարհում և Նա (Խ.Ա.Ո.Ն), երբեք և ոչ ոքի չի առանձնացրել իր նվերներով, հիմնվելով մաշկի գույնի կան սեռի վրա: Հաքիմ իբն Հիզեմ. «Մարգարե Մուհամեդը(Խ.Ա.Ո.Ն) իմ ամենասիրելի մարդն էր նույնիսկ բազմակրոնության ժամանակ:» Եվ երբ Նրան (Խ.Ա.Ո.Ն) տրվեց մարգարեական առաքելությունը և Նա (Խ.Ա.Ո.Ն) տեղափոխվեց Մեդինա, ապա Հաջի ժամանակ Կաքիմ իբն Հազիմը գնաց այնտեղ: Այնտեղ նա տեսավ եմենյան թիկնոց, որը վաճառվում էր հիսուն դիրհամով: Նա գնեց այն, որ նվիրի Ալլահի Առաքյալին

[35] Բուխարի
[36] Բոէխարի

(Խ.Ա.Ո.Ն): Որից հետո նա մատուցեց այն նրան (Խ.Ա.Ո.Ն) որպես նվեր և ցանկացավ , որ Նա (Խ.Ա.Ո.Ն) ընդունի այն : Ուբեյդուլլան ասաց, « Ես կարծում եմ , որ Նա (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Ճշմարիտ , մենք չենք ընդունում ոչինչ բազմաստվածներից , բայց կարող ենք այն գնել :» Այդ ժամանակ նա վաճառեց այն Նրան (Խ.Ա.Ո.Ն) : Դրանից հետո Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) , վերադարձավ Մեդինա և հագավ այն : Եվ ես տեսա , ինչպես Նա (Խ.Ա.Ո.Ն) հագնում էր այն և դուրս էր գալիս մինբար : Ես երբեք չէի տեսել որևէ մեկին ավելի գեղեցիկ քան Նա (Խ.Ա.Ո.Ն) այդ օրը : Դրանից հետո Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) նվիրեց այդ թիկնոցը Ուսամա իբն Զեյդին : Եվ Հաքիմը տեսնելով այն նրա վրա ասաց. « Օ, Ուսամա , դու կրում ես յեմենյան թիկնոցը: » Ինչին Ուսաման (թող Ալլահը գոհանա նրանով), պատասխանեց .« Այո , որովհետև ես ավելի լավն եմ քան նա[37] , իմ հայրը ավելի լավն է , քան նրա հայրը և իմ մայրը ավելի լավն է քան նրա մայրը :»[38]

Ի՞նչը դրդեց Ուսամային ասել այսպիսի խոսքեր : Ճշմարիտ , սա Իսլամն է , որը հավասարեցրել է բոլոր մարդկանց , մանավանդ նրանց մաշկի գույնի և սեռի տեսանկյունից : Այն տվեց նրանց իրավունք , որը հանդիսանում է խոսքի իրավունք[39] , որը ավելի վաղ արգելված էր նրանց համար :

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն), նստել էր իր հետևորդների հետ , զրուցում և ուրախանում էր նրանց հետ , հարցնում էր իրենց գործերից , լսում էր նրանց բողոքները և ուղղում էր Իսլամի հասկացությունը , ինչպես խոսքերով այնպես էլ գործերով : Մանավանդ այն բանում ինչ վերաբերվում էր ուրիշներին նվաստացնելուն : Աբու Հուրեյրան (թող Ալլահը գոհանա նրանով), ասում է .« Մի անգամ երկու մարդ վիրավորեցին իրար, և նրանցից մեկը անպատվեց մյուսի մորը : Այդ հասավ Ալլահի Առաքյալին (Խ.Ա.Ո.Ն): Նա կանչեց իր մոտ այդ մարդուն և ասաց. « Դու

[37] Հաղորդված. Նկատի են ունեցել թիկնոցի նախկին
[38] Մուստադրակ Ալ Աս-Սահիհին, 3/551
[39] Հաղորդված. Շարիաթի սահմաններում

վիրավորեցի՞ր նրա մորը։» և կրկնեց այս հարցը որոշ ժամանակ անց։ Որին այդ մարդը պատասխանեց.«Ես Ալլահի թողությունն եմ խնդրում այնի համար, ին չ ասել եմ։» Եվ Ալլահի Առաքյալը (Խ.Ա.Ո.Ն), ասաց.« Բարձրացրու քո գլուխը և նայիր այս հավաքված մարդկանց։» Եվ նա նայեց նրանց, ովքեր Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) շուրջն էին, ով ասաց. « Դու ավելի լավ չես քան կարմրամորթը կամ սևամորթը նրանցից, այլ լավն է միայն նա, ով ունի կրոնում արժանի գործ։»[40]

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն), երբեք գոհ չէր այն բանով, ով ծաղրում էր կամ նվաստացնում էր ուրիշ մեկին, լիներ դա նրա ներկայության կամ բացակայության ժամանակ։ Օրերից մի օր, հետևորդները հավաքվեցին հավաքույտի, որտեղ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ներկա չէր։ Եվ ներկաներից մեկն էր Խալեդ իբն ալ-Վալիդը, Աբդուռահմեն իբն Աուֆը, Բիլել իբն Ռաբահը և Աբու Զառ ալ- Գիֆարին, հանճարեղ և արժանի հետևորդները։ Նրանց միջից սևամորթ էր միայն եթովպիացի Բիլելը։ Իսկ Աբու Զառին բնորոշ էր բնածին բռնկումը։ Մարդիկ սկսեցին քննարկել ինչ որ հարց։ Եվ Աբու Զառը արտահայտեց իր կարծիքը։ Բիլելը (թող Ալլահը գոհանա նրանով), ցույց տվեց նրան սխալը։ Եվ այստեղ Աբու Զառը (թող Ալլահը գոհանա նրանով), ասաց.

Նույնիսկ դու, օ, սևամորթի զավակ, մեղադրում ես ինձ սխալու՞մ։

Այստեղ Բիլելը զարմացած ոտքի կանգնեց, զգալով բարկություն և ափսոսանք։ Նա ասաց.

Երդվում եմ Ալլահով, ես կհաղորդեմ քո խոսքերը Ալլահի Մարգարեյին, և շտապեց Նրա (Խ.Ա.Ո.Ն) մոտ։ Նա հաղորդեց Նրան (Խ.Ա.Ո.Ն) Աբու Զառի, (թող Ալլահը գոհանա նրանով), խոսքերը։ Արդյունքում Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) դեմքի արտահայտությունը փոխվեց։ Երբ Աբու Զառը (թող Ալլահը գոհանա նրանով), լսեց այս

[40] Մուսնադ Իսահակ Իբն Ռահավե,1/427 Հադիթ 493

նորությունը , ապա արագ շտապեց մզկիթ : Նա մտավ մզկիթ և ասաց.

Խաղաղություն քեզ , օ, Ալլահի Մարգարե, - և հետո ավելացրեց . - Ես չգիտեմ , Նա (Խ.Ա.Ո.Ն), բարկության պատճառով պատասխանեց իմ ողջույնին թե ոչ :

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն), ասաց.

« Օ, Աբու Զառ , դու մեղադրեցիր նրան , նրա մոր պատճառո՞վ : Ճշմարիտ , դու մարդ ես , ում մեջ մնացել է տգիտության ժամանակների հետքերը :»

Եվ այստեղ Աբու Զառը (թող Ալլահը գոհանա նրանով), արտասվեց և ծնկի եկավ ասելով .

Օ, Ալլահի Մարգարե , խնդրիր Ալլահից թողություն իմ փոխարեն ....., և հետո լացակումած դուրս եկավ մզկիթից : Ճանապարհին նա տեսավ Բիլելին : Երբ նա տեսավ նրան , ապա ընկավ ճանապարհի վրա և դրեց իր այտը գետնին ասելով .

Օ, Բիլել , երդվում եմ Ալլահով , ես չեմ բարձրացնի իմ այտը գետնից , մինչ դու չկանգնես նրա վրա քո ոտքով : Դու առաքինի ես , իսկ ես նվաստացած :

Բիլելը բարձրացրեց նրան լացելով , համբուրեց նրա այտը և ասաց. « Ճակատի վրա , որը խոնարհվում է Ալլահին , ոտք չի բարձրանում : »

Ո՞վ է այդ մարդը՞ Բարձրահասակ, նիհար , շատ թխամաշկ, խիտ մազերով , նեղ ուսերով , որին գալիս էին մարդիկ , հիշում էին նրա արժանիքները և այն , որ Ալլահը կանխագուշակել է նրան բարիք : Նա չէր ցանկանում լսել այս բոլոր գովասանքները , մինչ նրա հոգին չիմացավ նրա իրական արժանիքը , որպեսզի ապահովագրի իրեն գայթակղությունից և հպարտությունից : Նա

ասում էր և արցունքները գլորվում էր նրա այտերով. «Ես միայն եթովպացի եմ, ով միայն երեկ ստրուկ էր .....:»

Ո՞վ է այդ եթովպիացի ստրուկը, որին այս ամբողջ բարձր աստիճանը արժանավայել տրված է Իսլամում, և այս ավելացրել է ավելի շատ համեստություն և հասկացություն ճշմարիտի նորելուկների դիրքերում: Ով ասել է, իմանալով, որ որոշ մարդիկ համարում են նրան Աբու Բեքրից բարձր (թող Ալլահը գոհանա նրանով), ով առաջին փոխանորդն էր Ալլահի Մարգարեյից (Խ.Ա.Ո.Ն) հետո, և լավագույնն էր առաքյալներից և մարգարեներից հետո: Նա ասաց. «Ինչպես են ինձ համարում բարձր նրանից, երբ ես հանդիսանում եմ միայն մի լավ արարք նրա բոլոր արարքների դիմաց:»

Ով է այդ եթովպացի ստրուկը, որին ինքը Ալլահի Առաքյալը (Խ.Ա.Ո.Ն)խոստացել է Դրախտ, ասելով նրան առավոտյան աղոթքից հետո. «Օ, Բիլել, ասա ինձ, ո՞ր գործն է քո արարքներից Իսլամում, որը ներշնչում է ավելի շատ հույս, քանզի, ճշմարիտ, ես լսել եմ քո սանդալների ձայնը, որը գալիս էր իմ առջև Դրախտում:» (Ի պատասխան դրան, Բիլելը, թող Ալլահը գոհանա նրանով,) ասաց. «Ոչ մի բան իմ արարքներից չի ներշնչում ինձ այնքան հույս, ինչ այն, որ ցանկացած ժամանակ գիշերը թե ցերեկը երբ լվացում եմ արել, դրանից հետո անպատճառ ես աղոթել եմ, չհասցնելով կեղտոտվել:»[41]

Ո՞վ է այդ եթովպացի ստրուկը, որի շնորհիվ և նրա նման թույլ մուսուլմանների

շնորհիվ Ամենաբարձրյալ Ալլահը լուսաբանել է ղուրանական այաթը, որը կընթերցվի մինչև Դատաստանի օրը:

Մի անգամ քուրեյշական վերնախավը եկավ Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մոտ, երբ նա նստած էր եթովպիացի Բիլելի, պարսիկ Սալմանի, հռոմեացի Սուհեյբի, Ամմարի, Հաբիբի և ուրիշ թույլ և աղքատ

[41] Բուխարի և Մուսլիմ

հավատացյալների հետ: Երբ քուրեյշները տեսան նրանց Նրա (Խ.Ա.Ո.Ն) հետ, ապա ասացին. «Ճշմարիտ, մենք ուզում ենք, որ դու մեզ հետ առանձին հանդիպում անց կացնես, որին մենք արժանի ենք, միայն արաբների համար: Քանզի քեզ մոտ են գալիս արաբների պատգամավորությունը և մեզ անհարմար է, որ ուրիշ արաբները տեսնեն մեզ այս ստրուկների հետ: Երբ մենք գալիս ենք քեզ մոտ վռնդիր նրանց, և երբ գնանք, ապա նստիր նրանց հետ, եթե ցանկանում ես:»

Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Լավ:» Քուրեյշ ցեղի մարդիկ ասացին. «Գրիր մեզ համար նամակ, որը վկայում է այդ:» Այդ ժամանակ Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) կանչեց գրագրին: Այսպիսով Նա (Խ.Ա.Ո.Ն) միայն ցանկանում էր գրավել այդ քուրեյշ ցեղի մարդկանց սրտերը, քանզի դրանով նա կամրապնդեր Իսլամը և նրա հետևորդներին: Նույնիսկ այսպիսի առաքինի նպատակները Իսլամական Շարիաթով չունեն արդարացում, եթե դրանք հակառակ են նրա սկզբունքներին. սկզբունքները միշտ սկզբունքներ են, իսկ արժեքները միշտ արժեքներ:

Եվ այդ ժամանակ Ալլահը ուղարկեց Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) բացահայտում:[42]

«Մի վռնդեք նրանց, ովքեր կոչում են իրենց Աստծոն առավոտյան և մայրամուտից առաջ, ձգվելով դեպի Նա: Դու բոլորովին պատասխանատու չես նրանց համար, և նրանք բոլորովին պատասխանատու չեն քեզ համար: Եթե դու վռնդես նրանց, ապա կհայտնվես անօրենների շարքում: Այսպես մենք գայթակղել ենք որոշներին մյուսներով, որ նրանք ասեն.« Հնարավո՞ր է, որ մեր միջից Ալլահը գթասիրտ է միայն նրանց:» Արդյոք Ալլահը լավ չգիտի՞ նրանց ովքեր շնորհակալ են: Երբ քեզ մոտ գալիս են նրանք, ովքեր հավատացել են մեր նշաններին, ասա նրանց. «

[42] Վկայությունը իջավ մարգարեյին Գաբրիել հրեշտակի կողմից, ով պատասխանատու է դրա համար: ինչպես ասել է Մարգարեն Գաբրիելը ունի մի քանի տեսք: Ահա դրանցից մի քանիսը: «նրա մուտ գալիս էր հրեշտակ տղամարդու տեսքով և զրուցում էր մարգարեի հետ և մարգարեն նրա: բացահայտումը հնչում էր ինչպես զանգ, բայց նրա համար դա ավելի դժվար էր:

Խաղաղություն ձեզ :» Ձեր Աստվածը բնորոշել է իրեն Գթասիրտ , և եթե ձեզանից մեկը չարիք է գործել իր անգիտության պատճառով , հետո ապաշխարհել է և սկսել է անել լավ գործեր , ապա Նա – Ներող , Գթասիրտ է : »[43]

Եվ այդ ժամանակ , Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) թողեց իր ձեռքից փաթեթը և կանչեց մեզ ասելով. « Խաղաղություն ձեզ . Ձեր Տերը իրեն վերագրել է գութ :»

Մի անգամ մենք նստել էինք նրա հետ , երբ հանկարծ Նա (Խ.Ա.Ո.Ն) ցանկացավ վեր կենալ և գնալ : Եվ ուղարկվեց .

« Եղիր համբերատար նրանց հետ , ովքեր կոչում են իրենց Աստծուն առավոտյան և մայրամուտից առաջ և ձգտում են Նրան : Մի թեքիր նրանցից քո հայացքը , ցանկանալով այս աշխարհի զարդերը : »[44]

Դրանից հետո Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) միշտ նստում էր մեզ հետ , և երբ գալիս էր ժամը , երբ նրան(Խ.Ա.Ո.Ն) պետք էր հեռանալ , ապա մենք վեր էինք կանգնում և հեռանում էինք մինչ Նա (Խ.Ա.Ո.Ն) ինքն էր վեր կանգնում :

Այդպես և այդ եթովպացին , ով երեկ դեռ ստրուկ էր և այսոր արդեն դարձել էր տեր իր հավատքի շնորհի՞վ :

Եկեք լսենք նրա պատմությունը այնպես , ինչպես այն նկարագրել է Խալեդ Մուհամեդ Խալիդը[45] , թող Ալլահը գթա նրան :

Նա , Բիլել իբն Ռաբահը , Իսլամում առաջին մուադենը (աղոթքին կոչ անողը), պայթեցրեց օդը կոչով առ Ճշմարիտը : Նա , Բիլելը կոտրեց կուռքերը : Նա Բիլելն է , իսկ ո՞վ չգիտի Բիլելին , ով հանգրվանեց ամբողջ աշխարհի մուսուլմանների սրտերում և զգացմունքներում: Նա Իսլամի ամենահզոր հրաշքներից է : Ամեն

[43] Ղուրան 6:52-54
[44] Ղուրան 18:28
[45] « Ռիջալ Հաուլա ԱլՌասուլ» Գրքից հակիրճ:

տաս մուսուլմանների մեջ այն ժամանակվա մինչ օրերս, և մինչ այն օրը երբ կցանկանա Ալլահը, միշտ գտնվում են յոթ հոգի, ովքեր գիտեն Բիլելին: Այսինքն կան տաս միլիոն մարդ, ովքեր սերունդների և ժամանակի մեջ գիտեն Բիլելին, պահպանելով նրա անունը նրա ամբողջ պատմությունը, այնպես ինչպես գիտեն երկու հզոր փոխանորդների Աբու Բեքրի և Ումարի պատմությունները (թող Ալլահը գոհանա նրանցով):

Եվ եթե դու հարցնես երեխային, ով դեռ սովորում է առաջին դասարանում Եգիպտոսում, Պաղեստինում, Չինաստանում, Ամերիկայում, Եվրոպայում, Ռուսաստանում, Իրաքում, Սիրիայում, Իրանում, Սուդանում, Թունիսում, Մարոկոյում, Ալժիրում, Աֆրիկայի առանձնացված անկյուններում, Ասիայի լեռներում, կամ աշխարհի ցանկացած անկյունում, որտեղ ապրում են մուսուլմաններ. «Ո՞վ է Բիլել իբն Ռաբահը,» ապա նա քեզ կպատասխանի. «Նա Ալլահի Առաքյալի (Խ.Ա.Ո.Ն) մուադենն է: Նա ստրուկ է, որին տանջում էր իր իսկ տերը դնելով քարը նրա կրծքին, որպեսզի նա երես թեքի կրոնից, իսկ նա կրկնում էր.» «Միակ, Միակ», գիտակցելով այն հավերժությունը, որը տալիս է նրան Իսլամը:

Իմացիր, որ Իսլամից առաջ Բիլելը եղել էր ոչ ավելին քան ստրուկ, ով արածեցնում էր իր տիրոջ ուղտերը, արմավի դիմաց, որպեսզի գոյատևի:

Նա ճշմարիտ էր իր հավատքում և կրոնի հզորության մեջ, որին նա հավատում էր, և որը մեծարեց նրան կյանքում և առանձնացրեց բարձր դիրք Իսլամի պատմության մեջ, արժանի, հարգալից և մեծերի մեջ: Իրոք, մարդկության վերնախավի շատ ներկայացուցիչներ, հեղինակություններ և հարուստներ, չեն հասել այսպիսի հավերժ պատվի, որին արժանացել է Բիլելը, եթովպացի ստրուկը: Ավելին, շատ պատմական հերոսներ չեն հասել այսպիսի հանրաճանաչության, որին հասել է Բիլելը:

Նրա մաշկի մգությունը, բնավորության համեստությունը և ծագումը, մարդկանց նկատմամբ հանգիստ վերաբերմունքը, ինչպես ստրուկի, չէին խոչընդոտում նրան, երբ Իսլամը թողեց հետք նրա մեջ: Այն բերեց նրան բարձր դիրքի, իր ճշմարտության, ջանքերի, մաքրության, աշխատասիրության և համոզմունքների շնորհիվ:

Մարդիկ ենթադրում էին, որ Բիլելի պես ստրուկը, հանդիսանում էր անհայտ ծագման, ընտանիքի և բարեկամների մարդ, որը չէր տիրում իր կյանքին և ինքն հանդիսանում էր իր տիրոջ իշխանության տակ, որը գնել էր նրան գումարով: Նա քայլում և սնվում էր իր տիրոջ տնային կենդանիների հետ, ինչպիսիք են ուղտերը և այլ կենդանիները:

Նրանք կարծում էին, որ այդպիսի մարդը, ոչինչի ընդունակ չէ և ոչինչ իրենից չի ներկայացնում: Նրանք բոլորը նույնպես համարում էին, որ երբ նա հետևեց Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) և կարողացավ հավատալ, ապա շատ քչերը նրա նման կարող էին անել այդ: Հետո նա դարձավ Իսլամի և Ալլահի Առաքյալի (Խ.Ա.Ո.Ն) առաջին մուադենը: Դա այն էր, որ շատ հայտնի առաջնորդներ Քուրեյշ ցեղից և ուրիշ անվանի մարդիկ, ովքեր ընդունել էին Իսլամ, կցանկանային անել:

Այո, նա Բիլել իբն Ռաբահն էր: Ինչ հերոսություն և մեծություն է արտահայտում մեզ այս անունը. Բիլել իբն Ռաբահ:

Ճշմարիտ այս եթովպիացին, սևամորթ ստրկուհու, Համեմի, որդին: Նա լույս աշխարհ եկավ ստրուկ, ովքեր պատկանում էին Ումեյա իբն Խալաֆ ալ–Ջամխիին մեքքայից, և նրա մայրը նրա ստրուկներից մեկն էր:

Բիլելը ապրում էր ստրուկի կյանքով, անց կացնելով օրերը անիմաստ: Նա ոչինչի իրավունք չուներ և ապագայի ոչ մի հույս.....

Եվ այստեղ հայտնվեցին Մուհամեդի (Խ.Ա.Ո.Ն) բարի լուրերը , որոնք սկսեցին հասնել նրա ականջին : Մեքքայի բնակիչները սկսեցին պատմել դրանք միմյանց , և առաջնորդները , և հյուրերը պատմում էին այդ մասին : Մանավանդ Ումեյա իբն Խալաֆը , Ջամխ ցեղի առաջնորդը , որին պատկանում էր Բիլելը :

Այդ ցեղի առաջնորդն էր Ումեյան : Եվ մի անգամ նա հաղորդակցվում էր իր ցեղի ներկայացուցիչների և ընկերների հետ : Երբեմն նրանք զրուցում էին Ալլահի Առաքյալի (Խ.Ա.Ո.Ն) մասին բարկությամբ , վիրավորանքով :

Բայց Բիլելի ականջները այս սարսափելի բարկության մեջ ընկալում էին նոր կրոնի իրական պատկերը , որը կոչ էր Միաստվածության , բարձր բարոյականության , հավասարության և ազատության : Նա զգում էր , որ սրանք նոր հատկություններն են այն հասարակության , որում նա ապրում էր : Նրանց ուժեղ խոսակցություններից նա ընկալում էր Մուհամեդի (Խ.Ա.Ո.Ն) արժանիքների , արդարության , վստահելիության և բանականության ճանաչումը :

Այո , ինչ նա լսում էր նրանցից , զարմացնում էր նրան և հետաքրքրություն առաջացրեց այն բանին , ինչով եկել էր Մուհամեդը (Խ.Ա.Ո.Ն): Նրանք ասում էին միմյանց . « Մուհամեդը չի ստել ոչ մի անգամ և չի եղել խելագար կամ հմայող :Եվ մենք անպատճառ պետք է նրան որևէ բանով խայտառակենք , որ հեռացնենք նրանից նրանց , ովքեր կշտապեն դեպի նրա կրոնը : »

Նա լսում էր , թե ինչպես նրանք խոսում են Նրա (Խ.Ա.Ո.Ն) հուսալիության , հավատարմության , բարոյականության , բարեգործության և մտածելակերպի մասին :

Նա նույնպես լսեց , թե ինչպես նրանք շշուկով խոսում էին պատճառների մասին, որոնք դրդեցին նրանց թշնամանալ Նրա (Խ.Ա.Ո.Ն) հետ : Առաջին պատճառը նրանց հայրերի կրոնին հավատարիմ լինելն էր : Երկրորդը քուրեյշների վախը կորցնել

իրենց մեծությունը: Այդ մեծությունը հանդիսանում էր նրանց դիրքը ինչպես կրոնական կենտրոն, երկրպագության մայրաքաղաք, ծեսերի, ուխտագնացության վայր ամբողջ Արաբական թերակղզում: Հետո նախանձը Հաշիմ ցեղին, որ հենց իրենցից է դուրս եկել առաքյալը, այլ ոչ թե իրենց ցեղից:

Այդ օրը Բիլել իբն Ռաբահը լուսավորվեց Ալլահի Լույսով և իր հոգու խորքում լսեց լավագույնի ղողանջը: Հետո նա գնաց Ալլահի Առաքյալի (Խ.Ա.Ո.Ն) մոտ և ընդունեց Իսլամ....

Բիլելի կյանքը Իսլամ ընդունելուց հետո չեղավ հանգիստ, ինչպես առաջ էր. քուն, ուտելիք, ըմպելիք: Նրա Իսլամ ընդունելու լուրը տարածվեց, ամենուր և հասավ Ջամխ ցեղի առաջնորդներին, որոնք լցված էին մեծամտությամբ և ընչաքաղցությամբ: Ամբողջ աշխարհի սատանաները նստեցին ՈՒմեյա իբն Խալյաֆի կրծքին, ով դիտում էր իր ստրուկի Իսլամ ընդունելու փաստը ինչպես ապտակ բոլոր իրենց, որը կտանի նրանց դեպի ամոթ և խայտառակություն: Նրանց եթովպիացի ստրուկը ընդունե՞լ է Իսլամ և հետևե՞լ է Մուհամեդին:

Ումեյան ասաց ինքն իրեն. «Չնայած այս ամենին, ոչինչ սարսափելի չի եղել... Ճշմարիտ, այսօրվա արևը չի մտնի մայր, մինչ նրա հետ մայր չի մտնի այդ դավանափոխ ստրուկի Իսլամը:»

Բայց արևը երբեք մայր չմտավ Բիլելի Իսլամի հետ: Հակառակը, արևը այդ օրը մայր մտավ քուրեյշների կուռքերի և կռապաշտության հոգլարքի հետ:

Ինչ վերաբերվում է Բիլելին, ապա նրա հետ տեղի ունեցավ դեպք, որի արժանապատվությունը բնորոշ է ոչ միայն Իսլամին, չնայած Իսլամը բավարար է, այլև նաև ամբողջ մարդկության համար: Նա հպարտորեն տարավ դաժան տանջանքները անսասանությամբ, որը բնորոշ է միայն հանճարեղ և վայել մարդկանց: Ամենաբարձրյալ Ալլահը դարձրեց նրան օրինակ այն

բանի , որ մաշկի սև գույնը և ստրկությունը չեն փչացնում հոգու մեծությունը , եթե այն լցված է հավատքով և ամուր կառչած է իր Արարչից , հավատալով Ճշմարտությանը :

Բիլելը մատուցեց ուսուցողական դաս բոլորին , ովքեր ապրում էին նրա ժամանակ , իր կրոնի ներկայացուցիչներին և այլ կրոնների ներկայացուցիչներին... Դաս , որը ուսուցանում է , որ անհատի ազատությունը և նրա կարևորությունը չի վաճառվում ոսկու կտորով :

Նա առաջին յոթ մարդկանցից էր , ովքեր բացահայտ հայտարարեցին իրենց Իսլամ ընդունելու մասին Ալլահի Առաքյալի (Խ.Ա.Ո.Ն) կոչի սկզբում : Նրանք էին Աբու Բեքրը , Ամմարը և նրա մայր Սումեյան , Սուհեյբը , Բիլելը և Միկդադը (թող Ալլահը գոհանա նրանցով): Ինչ վերաբերվում էր Ալլահի Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն), ապա Ալլահը պաշտպանեց նրան հորեղբայր Աբու Տալիբի միջոցով , ով պաշտպանում և պահպանում էր նրան : Աբու Բեքրին պաշտպանում էր նրա ցեղը : Իսկ մնացած մյուսներին վերցրեցին քուրեյշ ցեղի ներկայացուցիչները, հագցրեցին նրանց երկաթե հագուստներ և թողեցին թեժ արևի տակ : Եվ նրանցից բոլորից քուրեյշ ցեղի ներկայացուցիչները ստացան այն ինչ ուզում էին , բացի Բիլելից : Ճշմարիտ , նա տարավ այդ բոլոր տանջանքները հանուն Ալլահի : Բայց քուրեյշ ցեղի ներկայացուցիչները տվեցին նրան երեխաների ձեռքը , ովքեր վերցրեցին նրան և սկսեցին քայլել նրա հետ Մեքքայի բնակիչների դիմաց , և նա չէր հոգնում կրկնել .« Միակ , Միակ ...»[46]

Նրան գցել էին մերկ թեժացած ածուխի վրա : Այսպես նրանք փորձում էին ետ կանգնեցնել նրան իր կրոնից , կամ գոնե սասանեն նրա համոզմունքը , բայց Բիլելը մերժեց անել այդ :

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) և Իսլամը դարձրեցին այս թույլ եթովպիացի ստրուկից ուսուցիչ ամբողջ մարդկության համար ,

[46] Սահիհ Իբն Հաբբան 15/558

անհատի հարգանքի և նրա ազատության պաշտպանության հարցում :

Քուրեյշ ցեղի ներկայացուցիչները հանում էին նրան կեսօրին , երբ անապատը վերածվում էր սպանիչ գեհենի և գցում էին նրան մերկ թեժ քարերի վրա : Հետո նրանք բերում էին ծանր քար , որը հատուկ քաշ էին տալիս ուրիշ տեղից մի քանի հոգի և դնում էին նրա կրծքին : Այսպիսի վայրի պատիժը շարունակվում էր ամեն օր : Նույնիսկ այնպես պատահեց , որ այսպիսի սարսափելի պատժից որոշ մարդկանց սրտերը մեղմանում էին : Վերջապես նրանք համաձայնեցին թողնել նրան պայմանով , որ նա լավ կխոսի իրենց աստվածների մասին , նույնիսկ մեկ բառ , որպեսզի հանգստացնեն իրենց փառասիրությունը և որ չասեն ուրիշներին , որ նրանք պարտվել են իրենց ստրուկի անսասանությունից :

Բայց նույնիսկ այդ բառը , որը նա կարող էր ասել , չհավատալով իր հոգում և գնելով իր կյանքը , Բիլելը հրաժարվեց արտաբերել , քանի որ ցուցաբերում էր զոհունակություն :

Այո , նա մերժեց արտաբերել այն , փոխարենը սկսեց կրկնել մշտական խոսքերը , « Միակ , Միակ ....»: Նրան ասեցին . « Ասա այն , ինչ մենք ասում ենք :» Եվ նա պատասխանեց նրանց զարմանալի հեգնանքով . « Ճշմարիտ , իմ լեզուն չի կարողանում այդ ասել ... :»

Եվ շարունակեց Բիլելը մնալ տաք քրտինքի մեջ , ժայռերում այնքան ժամանակ , մինչ չանցան նրա մոտով մարդիկ , ովքեր բարձրացրեցին նրան : Նրանք հագցրեցին նրա պարանոցին թել և հրամայեցին իրենց երեխաներին վազել նրանով Մեքքայի լեռներով և փողոցներով , բայց Բիլելը չարտաբերեց իր լեզվով ոչինչ , բացի սուրբ խոսքերից . « Միակ , Միակ ... :»

Երբ եկավ գիշերը , նրանք սկսեցին վիճել նրա հետ . « Վաղը ասա լավ խոսքեր մեր աստվածների մասին : Ասա .« Մեր տերը ալ-Լատը և ալ Ուզան , իմ երդումների և գործերի համար : Մենք

հոգնեցինք քեզ տանջել, կարծես մենք մեզ ենք տանջում ...» » Իսկ նա բարձրացրեց գլուխը և արտաբերեց. « Միակ, Միակ ...»

Ումեյա իբն Խալյաֆը հարվածեց նրան, լի բարկությամբ և սկսեց բղավել.« Ո՞ր դժբախտությունն է ուղարկել քեզ մեզ, օ, չարիքի ստրուկ: Երդվում եմ ալ- Լատով և ալ- ՈՒզով, ես անպատճառ կդարձնեմ քեզ նայելու առարկա ստրուկների և տերերի համար:»

Իսկ Բիլելը պատասխանեց, հավատացյալի լիարժեք գիտակցությամբ և մաքրությամբ.« Միակ Միակ .....»

Եվ այստեղ սկսեցին հակառակվել և խոսել նրա հետ, ով սպառնում էր Բիլելին, զոչալով նրա համար, ասելով.« Սանձիր քո զայրույթը, օ, Ումեյա: որդվում եմ ալ- Լատով, նա չի պատժվի այսօրվանից սկսած: Ճշմարիտ Բիլելը մեզանից է և նրա մայրը մեր ստրկուհին: Եվ նա չի գոհանա, եթե քուրեյշ ցեղի ներկայացուցիչները վատ արտահայտվեն և ծաղրեն մեզ նրա Իսլամ ընդունելու պատճառով:»

Բիլելը ուշադիր նայեց նրանց խորամանկ և սուտ երեսներին: Բայց նրա շրթունքներին առկայծեց ժպիտ, նման վաղորդյան լույսի: Եվ այստեղ նա արտաբերեց հանգստությամբ, որը բռնկեց նրանց. « Միակ, Միակ..... »

Եկավ հաջորդ օրը և համարյա կեսօր էր: Բիլելին դուրս տարան թեժ շոգի, իսկ նա համբերատար էր և հնազանդ, կանգուն և առողջ: Այն պահին երբ նրանք նրան տանջում էին, նրանց մոտ դուրս եկավ Աբու Բեքր աս- Սադիքը (թող Ալլահը գոհանա նրանով), և բղավեց.« Արդյոք դուք չե՞ք վախենում Ալլահից: Կսպանեք մարդուն միայն նրա համար որ նա ասում է» Իմ Տերը Ալլա՞հն է: «Մինչ ե՞րբ»: Բայց Ումեյան ասաց. « Դու փչացրել ես նրան և այդ իսկ պատճառով ես նրան պատժում եմ այնպես, ինչպես հիմա տեսնում ես:» Իսկ Աբու Բեքրը (թող Ալլահը գոհանա

նրանով), գոչեց Ումեյա իբն Խալյաֆին . « ահա վերցրու գումար ավելին քան նա արժե , բայց տուր նրան ազատություն :»

Կարծես Ումեյան խորտակվեց , իսկ նրան մոտեցավ փրկիչ նավակը : Նրա հոգին հանգստացավ և փառաբանվեց , երբ նա լսեց , որ Աբու Բեքրը (թող Ալլահը գոհանա նրանով), առաջարկեց փրկագին Բիլելի ազատման համար : Քանզի իրենց հոգիների հիասթափությունը կոտրելու Բիլելին հասավ գագաթնակետին : Եվ նաև նրանք վաճառականներ էին և հասկացան , որ նրա վաճառքը նրանց համար կլինի ավելի ձեռնտու , քան նրա մահը :

Նրանք վաճառեցին Բիլելին Աբու Բեքրին (թող Ալլահը գոհանա նրանով), ով անմիջապես ազատեց նրան , որից հետո Բիլելը գրավեց իր արժանի տեղը ազատ մարդկանց շարքում :

Երբ աս - Սադիքը (թող Ալլահը գոհանա նրանով), բռնեց Բիլելի արմուկը իր թևի տակ , տանելով նրան ազատության , Ումեյան ասաց նրա ետևից .« Վերցրու նրան , քանզի երդվում եմ ալ – Լատով և ալ- Ուզով , եթե դու ցանկանայիր գնել նրան միայն տասներկու դրհամով , ապա ես կվաճառեյի քեզ նրան :»

Աբու Բեքրը (թող Ալլահը գոհանա նրանով), գիտակցում էր , որ այս խոսքերում սահում է հուսահատություն և հիասթափություն , կարող էր և չպատասխանել , բայց քանի որ պետք էր պաշտպանել եղբոր արժանապատվությունը , որը դարձել էր Բիլելը , նա պատասխանեց Ումեյային . « Երդվում եմ Ալլահով , եթե դուք պահանջեյիք ինձանից հարյուրապատիկ անգամ շատ արժեք նրա համար , ես անպայման կվճարեյի այն : »

Եվ նա ուղևորվեց իր ուղեկցորդով Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) մոտ, տանելով նրան Բիլելի ազատման ավետիսը : Այդ օրը մեծ տոնախմբություն էր :

Ալլահի Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) հավատացող մուսուլմանները , անսասան տանում էին քուրեյշների կողմից հալածանքները

Մեքքայում : Եվ այդժամ Ալլահի Առաքյալը (Խ.Ա.Ո.Ն) հրամայեց նրանց ներգաղթել Մեդինա , որպեսզի այնտեղ նրանք գտնվեն անվտանգության մեջ և հեռու հեթանոս քուրեյշների տանջանքներից :

Ալլահի Առաքյալի (Խ.Ա.Ո.Ն) դիրքի ամրապնդումից և մուսուլմանների Մեդինայում մնալեց հետո , Նա (Խ.Ա.Ո.Ն) օրինականացրեց կոչը (ազանը), աղոթքից առաջ : Եվ ո՞վ դարձավ կանչողը (մուազան) հինգ անգամ ամեն օր : Եվ ո՞վ բացականչեց այդ հորիզոնի միջով , փառաբանելով Ալլահին և արտահայտելով Միաստվածության խոսքը : Իսկապես դա Բիլելն էր : Տասներեք տարի տանջանքներից և տանջալից կրակներից հետո նա բարձրաձայն հայտարարեց , որ « Ալլահը Միակն է , Միակն է ...«: Այսօր Ալլահի Առաքյալի (Խ.Ա.Ո.Ն) ընտրությունը ընկավ նրա վրա , որ նա դառանա առաջին մուազանը Իսլամում :

Իր բարձր և թափանցող ձայնով նա տարածեց խոսքը , որը լցնում էր սիրտը հավատքով , իսկ լսողությունը հանգստությամբ .

« Ալլահը Մեծ է , Ալլահը Մեծ է

Ես վկայում եմ , որ չկա աստված արժանի երկրպագության , բացի Ալլահից :

Ես վկայում եմ , որ չկա աստված արժանի երկրպագության , բացի Ալլահից :

Ես վկայում եմ , որ Մուհամեդը Ալլահի Առաքյալն է :

Ես վկայում եմ , որ Մուհամեդը Ալլահի Առաքյալն է :

Շտապեք աղոթքի , Շտապեք աղոթքի ,

Շտապեք փրկության , Շտապեք փրկության ,

Ալլահը Մեծ է , Ալլահը Մեծ է .

Չկա աստված, արժանի երկրպագման , բացի Ալլահից :»

Բայց քուրեյշ բազմաստվածները չհանգստացան , տեսնելով , ինչպես է այդ երիտասարդ կրոնը տարածվում և մեծանում էր նրա հետևորդների քանակը : Շուտով բռնկվեց մարտ քուրեյշների բանակի և մուսուլմանների միջև , ովքեր մոտեցան Մեդինային :

Դաժան էր շարունակվում պատերազմը: Այդ օրը Բիլելը գնաց առաջին մարտի , որին ներգրավվել էր Իսլամը , Բադրի ճակատամարտը : Դա այն մարտն էր , որի նախաբանն էր «Միակ , Միակ:» Դա Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) հրամանն էր :

Հենց այս մարտում քուրեյշները ունեցան ամենամեծ կորուստները, և առաջ անցան կռվելու նրանց բոլոր առաջնորդները մուսուլմանների հետ : Ումեյա իբն Խալյաֆը որոշեց դուրս չգալ և չմասնակցել այս մարտին : Նա , ով երեկ Բիլելի տերն էր և վայրի ձևով պատժում էր նրան :

Նա որոշել էր դուրս չգալ և սպասել , եթե չլիներ նրա ընկեր Ուկբա իբն Աբու Մուիտը : Երբ նրան հասավ լուրը , որ Ումայան սպասում է , նա վերցրեց թավան իր աջ ձեռքը և դուրս եկավ մինչ հանդիպեց Ումեյային , որը նստած էր իր ցեղակիցների հետ : Ուկբան գցեց թավան Ումեյայի դիմաց և ասաց. « Օ, Աբու Ալի , տապակիր ուտելիք սրա վրա , քանզի ճշմարիտ դու կանանցից ես : » Սրան Ումեյան բացականչեց .« Թող Ալլահը քեզ այլանդակի և այն ինչով դու եկել ես :» Սրանից հետո , նա չգտավ ոչ մի արդարացում և դուրս եկավ մարտնչողների հետ :

Որքան գաղտնիքներ ունի ճակատագիրը , որը բացահայտում և ցուցադրում է դրանք : Ուկբա իբն Մուիտը ամենամեծ դրդիչն էր Ումեյայի համար տանջելու Բիլելին և նրա նման թույլ մուսուլմաններին : Իսկ այսօր նա անձամբ դրդեց Ումեյային դուրս գալ Բադրի ճակատամարտ , որտեղ նա կզոհվի : Որբեղ կզոհվի նաև Ուկբան :

Ումեյան այն մարդկանց թվից էր , ովքեր խուսափում էին պատերազմից: Եվ եթե չլիներ Ուկբայի գալուստը, ով խայտառակեց նրան, ինչպես մենք տեսանք, ապա նա դուրս չէր գա:

Բայց Ալլահը իրագործում է իր հրամանը, թող դուրս գա Ումեյան, քանզի նրա և ստրուկների մեջ, ովքեր Ալլահի ստրուկներն են , կար հին հաշիվ: Եկավ վճարման ժամը և պարտատերը դեռ չէր մահացել: Ինչպես դու քեզ կպահես, այնպես էլ քեզ հետ ուրիշները կվերաբերվեն:

Ճշմարիտ, ճակատագրին հաճո է ծիծաղել բռնապետերի վրա: Ուկբան , որի դրդմանը լսում էր Ումեյան , հետևում էր իր կրքերին և տանջում էր անմեղ հավատացյալներին: Ուկբան իր ձեռքերով ուղարկեց Ումեյային մահվան:Եվ ու՞մ ձեռքով: Բիլելի և միայն նրա: Ձեռքեր, որոնք շղթայում էր Ումեյան և տանջում էր նրանց տիրոջը հարվածներով և տանջանքներով:

Հենց այդ ձեռքերով այսօր, Բեդրի մարտում, նշված ժամանակ քուրեյշների դեմ պայքարում , ովքեր նվաստացնում էին մուսուլմաններին ճնշմամբ և ատելությամբ: Այդպես ամեն ինչ տեղի ունեցավ:

Երբ սկսվեց մարտը երկու խմբերի միջև և մուսուլմանների կողմը ցնցվում էր «Միակ, Միակ» կարգախոսով, Ումեյայի սիրտը անհանգստացավ, նրա մոտ եկավ սուրհանադակ: Բառը, որը դեռ երեկ կրկնում էր ստրուկը, գտնվելով վախի և տանջանքների մեջ, այսօր դարձել է կրոն և նոր Ումմա ընդհանուր առմամբ:

« Միակ , Միակ » այսպե՞ս : Այս արագությամբ և այս հզորությա՞մբ: Խաչվեցին թրերը և բռնկվեց մարտը .... Երբ մարտը մոտենում էր ավարտին , Ումեյա իբն Խալյաֆը նկատեց Աբդուռահմեն իբն Աուֆին (թող Ալլահը գոհանա նրանով), ալլահի Առաքյալի(Խ.Ա.Ո.Ն) հետևորդին , և խնդրեց նրան դառնալ իր գերին, որպեսզի պահպանի իր կյանքը: Աբդուռահմեն իբն Աուֆը (թող Ալլահը գոհանա նրանով), ընդունեց այդ խնդրանքը ,

պաշտպանեց նրան և դարձրեց իր գերին: Հետո շարժվեց նրա հետ մարտի մեջտեղը ռազմագերիների ճամբար: Ճանապարհին նրանց նկատեց Բիլելը և հարցրեց բարձրաձայն. « Անհավատների գլխավոր Ումեյա իբն Խալյաֆ: Այսօր չկա նրան փրկություն:» Նա բարձրացրեց իր թուրը, որպեսզի կտրի գլուխը, որը ճնշվում էր մեծամտությամբ և փառասիրությամբ: Բայց Աբդուռահմեն իբն Աուֆը (թող Ալլահը գոհանա նրանով), բացականչեց. « Օ, Բիլել, նա իմ գերին է....»

Գերի այն ժամանակ, երբ պատերազմը մոլեգնում էր: Գերի, այն ժամանակ երբ նրա թուրը հենց նոր թափում էր մուսուլմանների արյունը: Ոչ, այդ ըստ Բիլելի ծաղր էր: Իսկ Ումեյան քմծիծաղում և ծաղրում էր, զգալով իր անվտանգությունը: Ծաղրում էր ամբողջ հոգով, այդ օրվա համար:

Բիլելի կարծիքով, նա միայնակ չէր կարող վերցնել գերուն իր կրոնով եղբոր ձեռքից: Եվ այդ ժամանակ Բիլելը դիմեց բարձրաձայն մուսուլմաններին.« Օ, Ալլահի օգնականներ, անհավատության գլխավորն է Ումեյա իբն Խալյաֆը: Այսօր չկա նրան փրկություն:» Այս կոչին պատասխանեց մուսուլմանների մի ջոկատ, որոնց թրերը հասան նպատակին և թափեցին արյուն: Նրանք հասան Ումեյային և նրա որդուն, ով կռվում էր քուրեյշների հետ: Եվ Աբդուռահմեն իբն Աուֆը (թող Ալլահը գոհանա նրանով), չկարողացավ ոչինչ անել: Նա նույնիսկ չկարողացավ պահել նրա դանակը, որը պահպանում էր գոտին:

Բիլելը երկար հայացք գցեց Ումեյայի մարմնին, որը ընկավ թրերի զարկերից, հետո արագ հեռացավ և բարձրաձայն կոչեց. « Միակ, Միակ ... »

Ես չեմ կարծում, որ մենք իրավունք ունենք խնդրել Բիլելին ներել Ումեյային, այս պարագայում: Բայց եթե Բիլելի և Ումեյայի հանդիպումը կայանար ուրիշ իրավիճակում, ապա մենք կարող էինք մեզ թույլ տալ Բիլելին խնդրել, որ նա ների Ումեյային:

Քանզի այդպիսի հավատքով և աստվածաված մարդը ինչպիսին Բիլելն էր , չէր լինի գծուծ ներելու : Բայց նրանց հանդիպումը տեղի ունեցավ պատերազմի ժամանակ , որտեղ ամեն մեկը կողմերից եկել էր սպանելու իր հակառակորդին :

Թրերը փայլփլում էին , սպանվածները ընկնում էին , նպատակները տապալվում էին : Հետո Բիլելը տեսնում էր Ումեյային , ով իր մարմնի վրա կենդանի տեղ չէր թողել : Ինչպե՞ս և որտե՞ղ է նա նրան հանդիպում : Նա տեսնում է նրան մարտի դաշտում , որը իր ն թրերով հավաքում է իր ավարը , կտրելով մուսուլմանների գլուխները : Եվ եթե մեկ ակնթարթ անգամ նա հասներ Բիլելի գլխին , ապա անպատճառ կկտրեր այն :

Այդպիսի իրավիճակներում , երբ հանդիպում են երկու մարտիկ , ոչ մի բանական , արդար մարդու մոտ միտք չի ծագի , որպեսզի հարցնեն Բիլելին ,« Ի՞նչու դու նրան գեղեցիկ չես ներել :»

Անցնում էին օրեր : Մեքքան բաց էր .... այնտեղ մտավ Ալլահի Առաքյալը (Խ.Ա.Ո.Ն) , շնորհակալ լինելով և փառաբանելով Ալլահին, գլխավորելով մուսուլմանների հազարավոր բանակը : Առաջին հերթին նա գնաց Քաբա : Դա սուրբ վայր է , որտեղ քուրեյշները հավաքել էին կուռքերին տարվա օրերի քանակությամբ :

« **Հայտնվել է ճշմարտությունը և անհայտացել է սուտը : Ճշմարիտ, սուտը դատապարտված է վախճանի** :»[47]

Այս օրվանից ոչ մի ալ – Լատ , ալ-Ուզի , կամ Հուբալյա : Այս օրվանից սկսած, մարդը չի ստորանա քարի կամ արձանի : Եվ չեն երկրպագի ոչ ոքի նույնիսկ իրենց հոգու մի մասնիկով բացի Ալլահից , որին ոչ ոք նման չէ , Նա Մեկն է , Միակը , Հզորը և Բարձրյալը :

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն) մտավ Քաբա , իր հետ տանելով Բիլելին : Նա (Խ.Ա.Ո.Ն), մտավ խորքը , մինչ դեմ առ դեմ չկանգնեց հյուսված լարերի , որոնք ներկայացնում էին Աբրահամին (Խ.Ա.Ո.Ն),

[47] Ղուրան 17:81

ով գուշակում էր աղեղներով : Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն), շատ բարկացավ և ասաց. « Թող Ալլահը կործանի նրանց : Մեր նախահայրը չէր գուշակում աղեղներով : Աբրահամը ոչ հրեա էր , ոչ էլ քրիստոնյա , բայց նա միաստված էր , մուսուլման և բազմաստվածների թվից չէր :» Հետո Նա (Խ.Ա.Ո.Ն), հրամայեց Բիլելին բարձրանալ Քաբա և ասել ազան : Բիլելը այդպես էլ արեց : Ինչ հրաշալի է այս ժամանակը , վայրը և իրավիճակը :

Կյանքը Մեքքայում կանգ առավ : Հազարավոր մուսուլմաններ կանգնեցին ինչպես մի հանգիստ մարմին , կրկնելով ազանի այդ խոսքերը Բիլելի ետևից :

Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն), դիմեց Մեքքայի բնակիչներին հետևյալ խոսքերով . « Օ, քուրեյշիտներ . Ճշմարիտ , Ալլահը մաքրել է ձեզ տգիտության մնացորդներից և նախնիներին սրբացնելուց .... Բոլոր մարդիկ առաջացել են Ադամից , իսկ Ադամը ստեղծվել է կավից ...» Եվ Նա (Խ.Ա.Ո.Ն), ավարտեց իր կոչը ասելով .« Օ, Մեքքայի բնակիչներ : Ի՞նչ եք կարծում , ի՞նչպես ես կվարվեմ ձեզ հետ :» Նրանք պատասխանեցին . « Բարի ձևով , քանզի դու մեծահոգի եղբայր ես և մեծահոգու որդի : » Նա (Խ.Ա.Ո.Ն) պատասխանեց . « Գնացեք , քանի որ դուք ազատ եք : » Իսկ բազմաստվածները իրենց տներում չէին դադարում կրկնել .« Նա՞ է այն Մուհամեդը իր աղքատներով , որոնց դեռ երեկ դուրս էինք մղում այս հողերից : Նա՞ է իրականում և նրա հետ տաս հազար հավատացյալներ : Նա՞ է իրոք , ում հետ մենք մարտնչել ենք , վտարել և սպանել ենք նրա ամենամոտ մարդկանց : Նա՞ է , իրոք , ով հենց նոր մեզ էր դիմում , երբ մեր կյանքերը նրա ձեռքերում էին և Նա ասաց մեզ ,« Գնացեք , քանզի դուք ազատ եք :»

Բիլելը շարունակում էր ապրել Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) հետ , ներկա էր լինում նրա հետ բոլոր հավաքույտներին , կոչում էր աղոթքի , պաշտպանում և պահպանում էր երկրպագության բոլոր ծեսերը այս հզոր կրոնի , որը հանեց նրան մթությունից դեպի լույս , ստրկությունից ազատություն :

Իսլամի աստիճանը բարձրացավ , իսկ նրա հետ բարձրացավ մուսուլմանի աստիճանը : Ամեն օր Բիլելը մոտենում էր Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) սրտին, ով նրան նկարագրում էր այսպես .« Բիլելը , Դրախտի բնակիչներից մեկն է : »

Բայց դրա հետ մեկտեղ , Բիլելը մնում էր մեծահոգի և համեստ : Նա համարում էր իրեն միայն « եթովպացի , ով դեռ երեկ ստրուկ էր : »

Մի անգամ նա գնաց հարսնախոսության իր և իր եղբոր համար , երկու քույրերի մոտ : Նա ասաց այդ աղջիկների հորը . « Ես բիլելն եմ , իսկ սա իմ եղբայրը , Աբդանը Եթովպիայից : Մենք մոլորված էինք , բայց Ալլահը տարավ մեզ ճիշտ ուղղով : Մենք ստրուկներ էինք , բայց Ալլահը մեզ ազատեց : Եթե դուք մեզ ամուսնացնեք մեզ , ապա փառք Ալլահին դրա համար , իսկ եթե մերժեք , ապա Ալլահը Մեծ է : »

Բիլելը չմնաց ստրուկ : Հակառակը , Իսլամի շնորհիվ նա դարձավ տեր : Մի՞թե երկրորդ փոխանորդը Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն), Օմար իբն ալ – Խատաբը (փող Ալլահը օրհնի և ողջունի նրան), ասաց քո մասին .« Աբու Բեքր , մեր տեր և ազատեցիր մեր տիրո՞ջը : »

Ալլահի Առաքյալը (Խ.Ա.Ո.Ն) մեռնելիս , գոհ էր Աբու Բեքրից (թող Ալլահը գոհանա նրանով),և հրամայեց նրան խնամակալել մուսուլմանների գործերը : Բիլելը գնաց Ալլահի Առաքյալի (Խ.Ա.Ո.Ն) փոխանորդի մոտ և ասաց նրան . « Օ, Ալլահի Առաքյալի փոխանորդ : Ճշմարիտ Ալլահի Առաքյալը (Խ.Ա.Ո.Ն) ասաց. « Սահմանի պահպանումը գիշեր և ցերեկ ավելի լավ է քան մեկ ամիս պահք պահելը և աղոթելը : Եվ եթե , սահման պահպանողը մահանա , ապա նրան շարունակվում է գրվել իր լավ գործերը, որոնք նա արել է առաջ և շարունակում է հասնել նրա սահմանը , և նա կլինի ապահովագրված գայթակղողից : »[48] Ինչին Աբու Բեքրը

[48] Մուսլիմ

(թող Ալլահը ն գոհանա նրանով), ասաց. « Եվ ի՞նչ ես դու ցանկանում , օ, Բիլել :» Նա պատասխանեց . « Ես ուզում եմ պաշտպանել սահմանները, մինչ մահ :» Աբու Բեքրը (թող Ալլահը գոհանա նրանով),ասաց. « Իսկ ո՞վ կկանչի մեզ աղոթքի :» Բիլելը պատասխանեց և նրա աչքերը լցվեցին արցունքով . « Ճշմարիտ , ես ոչ ոքի համար չեմ անի ազան Ալլահի Մարգարեյից (Խ.Ա.Ո.Ն) հետո :» Աբու Բեքրը (թող Ալլահը գոհանա նրանով), ասաց. « Մնա և ազան կանչիր մեզ համար , օ , Բիլել :»

Բիլելը ասաց. «Օ, հավատացյալների տիրակալ : Եթե դու գնել և ազատել ես ինձ միայն քեզ համար , ապա պահիր ինձ : Իսկ եթե դու գնել և ազատել ես ինձ հանուն Ալլահի , ապա թող ինձ և իմ գործերը Ալլահին :»

Աբու Բաքրը (թող Ալլահը գոհանա նրանով), ասաց. « Ես ազատել եմ քեզ հանուն Ալլահի , օ, Բիլել : Ես ազատել եմ քեզ հանուն Ալլահի, օ, Բիլել ....»

Բիլելը գնաց Շեմ ,(Դամասկոս) , որպեսզի մնա այնտեղ պաշտպանի սահմանները , այնքան ժամանակ , մինչ չի տեսել Ալլահի Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) իր երազում , ով ասաց նրան . « Այս ի՞նչ չորություն է , օ, Բիլել : Ի՞նչն է խանգարում քեզ այցելել մեզ : » Դրանից հետո Բիլելը տխրեց և մեկնեց Մեդինա : Հասնելով Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) գերեզմանին, նա սկսեց լաց լինել նրա կողքը և հետո հանդիպեց Հասանին և Հուսեյնին : Նա համբուրեց նրանց և սեղմեց իրեն : Իսկ նրանք ասացին նրան .« Կանչիր ազան : » Այստեղ նա բարձրացավ մզկիթի տանիք և սկսեց կանչել մարդկանց աղոթքի, բարձրացնելով իր փափուկ և խեղճացած ձայնը : Երբ նա արտաբերեց « Ալլահը Մեծ է , Ալլահը Մեծ է » , Մեդինան , որը արդեն լսել էր այդ փափուկ ձայնը Ալլահի Մարգարեյի (Խ.Ա.Ո.Ն) օրոք , ցնցվեց : Իսկ երբ նա արտաբերեց «Ես վկայում եմ , որ Մուհամեդը Ալլահի Առաքյալն է » , մարդիկ դուրս եկան իրենց տներից , կրկնելով նրա ետևից և լացելով : Նա չէր դադարում կանչել ազան իր մեղմ և փառահեղ ձայնով : Դա այն պատճառով

էր , որ նա չարտաբերեց իր ազանում « Ես վկայում եմ , որ Մուհամեդը Ալլահի Մարգարեն է » այքան ժամանակ , մինչև նրան չեն գալիս հիշողությունները : Նա չդիմացավ և իջեցրեց իր ձայնը տխրության ճնշման տակ , խեղդվելով բառերով , իր արցունքներով :

Վերջին նրա ազանը կատարվեց հավատացյալների առաջնորդ , Օմարի (թող Ալլահը գոհանա նրանով), այցելության ժամանակ Շեմ (Դամասկոս): Մարդիկ դիմել էին նրան , որ նա թույլ տա բերել Բիլելին , որ նա ազան կանչի գոնե մեկ աղոթքից առաջ : Հավատացյալների առաջնորդը հրավիրեց Բիլելին : Աղոթքի ժամը արդեն հասել էր և նա (թող Ալլահը գոհանա նրանով),ցանկացավ , որ ազան կանչի Բիլելը : Նա բարձրացավ վերև և կանչեց ազան : Հետևորդները , ովքեր տեսել էին Ալլահի Մարգարեյին (Խ.Ա.Ո.Ն) կենդանի, Բիլելի հետ , արտասվեցին : Նրանք արտասվում էին այնպես , որ երբեք առաջ չէին արտասվել : Իսկ Օմարը (թող Ալլահը գոհանա նրանով), արտասվում էր ամենից ուժգին :

Նա պաշտպանում էր Շեմ երկրների սահմանները այնպես , ինչպես վաղ ցանկանում էր : Այնքան ժամանակ մինչև չեկավ նրա ժամանակը : Նրա կինը նստել էր նրա կողքին մահվանից առաջ և ասում էր .« Օ, դժբախտություն :» Իսկ Բիլելը բացելով իր աչքերը , ամեն անգամ կրկնում էր . « Օ, Երջանկություն:» Հետո նա փչեց իր վերջին շունչը, ասելով .« Վաղը մենք կհանդիպենք մեր սիրելիներին. Մուհամեդին և նրա հետևորդներին ..... Վաղը մենք կհանդիպենք մեր սիրելիներին . Մուհամեդին և նրա հետևորդներին ..... »

Նա մոտավորապես վաթսուներեք տարեկան էր : Նրան հուղարկավորեցին Փոքր Դարպասների մոտ , Դամասկոսի գերեզմանատանը , որում հանգստանում է Իսլամի ամենահանճարեղ մարդկանցից մեկի աճյունը , ով կանգնել էր ժայռի պես , պաշտպանելով համոզմունքների հաստատությունը ցուցաբերելով անձնազոհություն հանուն ճշտի : Թող Ալլահը գոհանա քեզանով , օ, Բիլել :

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԸ

Ինչ մեծություն, արժանապատվություն և բարձրություն է թողնում այս կրոնը իր հետևորդների սրտերում: Իրապես, դա ճշմարտության ձայնն է, որը խառնվել է սրտերի մոզաիկով և արել է այն կապված և ենթարկված հզոր Ալլահին: Նա թույլ է տալիս մոռանալ ցանկացած ցավ և դժվարություն, որը կարող ես հանդիպել Նրա ճանապարհին: Ավելին, այն համարվում է հաճույք նման նրա, որը զգում են իրենց կրքերին տրվելով, երբ հանձնվում են նրան: Բայց որքա՞ն մեծ է տարբերությունը հաճույքի և կրքի միջև, որոնք ծնում են ափսոսանք և դրանից հետո գալիս է կորուստ: Իսկ հաճույքը ծնում է հավերժություն, որը զարդարվում է երանությամբ: Իրոք, նրանք ընտրել են ճիշտ ուղղի, որը կտանի նրանց երջանկության, որը նրանք կգտնեն Ալլահի մոտ: Իրականում այն բանին հասնելը, ինչին նրանք հասան այդ երջանկությունից, դժվար չէ, բայց կարիք ունի համարձակության և փոխվելու հնարավորության: Իրականում, նրանք իմացան, որ Դրախտի ճանապարհը, որին նրանք ձգտում են, Ալլահի Առաքյալին (Խ.Ա.Ո.Ն) հետևելն էր, ում բնորոշ չէր սուտը, դավաճանությունը կամ երդմնազանցությունը: Լսեք նրանց ճառերը Իսլամ ընդունելուց առաջ:

Աբու Սուֆյան իբն Հարբը (թող Ալլահը գոհանա նրանով), հաղորդեց այն մասին, որ Հերակլը ուղարկեց նրա ետևից, երբ նա ուղեկցում էր քուրեյշների քարավանը: Նրանք զբաղվում էին առևտրական գործերով Շեմում, և այդ այն ժամանակ էր երբ Ալլահի Մարգարեն (Խ.Ա.Ո.Ն), խաղաղության դաշինք կնքեց Աբու Սուֆյենի և մյուս անհավատ քուրեյշների հետ: Աբու Սուֆյենը իր ընկերների հետ ժամանեց կայսրի մոտ, Իլիա, որտեղ Հերակլը, գտնվելով Հռոմի հայտնի մարդկանց շրջապատում, կանչեց նրանց պալատ: Կանչելով նրանց և իր գրագրին նա հարցրեց. «Ո՞վ է

ձեզանից համարվում ամենամոտիկ բարեկամը այն մարդուն, ով պնդում է, որ ինքը մարգարե է:»

Աբու Սուֆյենը ասաց.

-Ես պատասխանեցի .« Ամենամոտիկը նրանցից , հանդիսանում եմ ես:» Այդ ժամանակ նա ասաց.« Մոտեցրեք նրան մոտիկ ինձ, իսկ նրա ընկերներին կանգնեցրեք նրա մեջքի ետևում ,» և հրամայեց իր գրագրին.« Ասա նրանց, որ ես հարցնելու եմ նրան այն մարդու մասին , և եթե նա ստի ինձ, թող նրանք մեղադրեն նրան ստի մեջ:» Եվ, երդվում եմ Ալլահով, եթե ես չամաչեյի նրանից , որ հետո նրանք կպատմեյին իմ ստի մասին , ապա անպատճառ կասեյի նրա մասին սուտը: Հետո Հերակլը տվեց ինձ նրա մասին առաջին հարցը.« Ինչպիսի՞ն է նրա ծագումը և դիրքը ձեր մեջ:» Ես պատասխանեցի.« Նա ազնվազարմ ծագում ունի:» Նա հարցրեց.« Հայտարարե՞լ էր ձեզանից որևէ մեկը այդպիսի բան առաջ:» Ես պատասխանեցի.« Ոչ »: Նա հարցրեց, « Եղե՞լ է որևէ մեկը նրա նախորդներից կառավարիչ:» Ես պատասխանեցի.« Ոչ »; Նա հարցրեց .« Իսկ ո՞վ է հետևում նրան, անվանինե՞րը, թե հասարակ մարդիկ:» Ես պատասխանեցի,« Ավելի շուտ հասարակ մարդիկ:» Նա հարցրեց . « Նրանց քանակը ավելանու՞մ , թե պակասում է:» Ես պատասխանեցի.« Ավելանում է:» Նա հարցրեց.« Իսկ մերժու՞մ է որևէ մեկը նրա կրոնը ընդունողներից դժգոհության պատճառով:» Ես պատասխանեցի.« Ոչ»: Նա հարցրեց . « Պատահե՞լ է ձեզ , մեղադրել նրան ստի մեջ մինչ նա հայտարարեց դրա մասին:» Ես պատասխանեցի.« Ոչ»: Նա հարցրեց, « Նրան բնորոշ չէ՞ ուխտադրժությունը:» Ես պատասխանեցի.« Ոչ, բայց նրա հետ մենք ունենք համաձայնություն և մենք չգիտենք ինչ է նա անելու ,» և ոչինչ չկարողացա ավելացնել ասածին: Նա հարցրեց.« Մարտնչե՞լ եք արդյոք նրա հետ:» Ես պատասխանեցի .« Այո »: Նա հարցրեց,« Ինչո՞վ է ավարտվել ձեր մարտերը:» Ես պատասխանեցի ,« Պատերազմը մեր միջև անցել է փոփոխվող հաջողություններով, նա հաղթել է մեզ և մենք հաղթել ենք նրան:» Նա հարցրեց .« Ի՞նչ է նա հրամայում ձեզ անել:» Ես

պատասխանեցի .« Նա ասում է .» Խոնարհվեք միայն Ալլահին , մի խոնարհվեք ուրիշ որևէ մեկին Նրան հավասար և մերժեք այն , ինչ ասել են ձեր նախնիները : « և էլի նա հրամայում է մեզ աղոթել , ասել ճիշտը, լինել բարի և պահպանել հարաբերությունները բարեկամների հետ :» Այդժամ նա հրամայեց գրագրին ասել ինձ .« ես հարցրեցի քեզ նրա ծագման մասին և դու պատասխանեցիր , որ նա պատկանում է հայտնի ցեղին, իսկ բոլոր նախորդ առաքյալները պատկանում էին հայտնի ցեղերին իրենց ազգերի : Եվ ես հարցրեցի քեզ , չի ասել որևէ մեկը նրանից առաջ նման մի բան , դու պատասխանեցիր , որ ոչ և ես մտածեցի , որ եթե որևէ մեկը արդեն ասած լիներ դրա մասին մինչ նա , ապա ես կորոշեյի , որ այս մարդը միայն կրկնում է իրենից առաջ եկածի ասածները : Հետո ես քեզ հարցրեցի , կան նրա նախնիներից կառավարիչներ : Դու պատասխանեցիր , որ ոչ և ես մտածեցի , որ եթե նա հանդիսանար կառավարիչների ժառանգորդ , ապա ես կորոշեյի , որ այս մարդը ձգտում է վերադարձնել իրեն իր ընտանեկան տիրույթները : Էլի ես հարցրեցի քեզ , չի պատահել ձեզ մեղադրել նրան ստի մեջ , մինչ նա սկսեց ասել այն , ինչ ասում է , և դու պատասխանեցիր , որ ոչ և ինձ պարզ դարձավ , որ եթե նա չի չարախոսել մարդկանց , ապա չի ստի Ալլահի հետ կապված : Էլի ես հարցրեցի քեզ , հայտնի մարդիկ, թե հասարակ մարդիկ են հետևում նրան և դու ասացիր , որ հասարակ մարդիկ , բայց հենց իրենք են հանդիսանում առաքյալների հետևորդներ : Էլի ես հարցրեցի քեզ , ավելանում , թե պակասում է նրանց քանակը , և դու ասացիր , որ ավելանում է , և հենց այդպիսին պիտի լինի հավատքի դրությունը , մինչ նա չի հասնում կատարելության : Էլի ես հարցրեցի քեզ , դրժում են նրա կրոնից որևէ մեկը ընդունածներից դժգոհության պատճառով և դու պատասխանեցիր , որ ոչ , ապա այդպես է լինում , երբ ճշմարիտ հավատը մտնում է սիրտը : Էլի ես հարցրեցի քեզ , բնորոշ չէ նրան ուխտադրժությունը և դու պատաս;անեցիր, որ ոչ , ապա առաքյալները չեն դրժում ոչինչ : Էլի ես հարցրեցի քեզ այն մասին , ինչ նա հրամայում է ձեզ անել և դու պատասխանեցիր , որ նա հրամայում է ձեզ

խոնարհվել Ալլահին և չխոնարհվել ուրիշ ոչ մեկի նրան հավասար, և արգելում է ձեզ խոնարհվել կուռքերին և հրամայում է ձեզ աղոթել, ասել ճշմարտությունը և լինել բարի և եթե դու ճիշտ ես ասում, ապա դա նշանակում է, որ նա անպատճառ ունի այն, ինչ հիմա ինձ է պատկանում: Ես գիտեյի, որ նա պիտի հայտնվի, բայց չէի ենթադրում, որ նա կլինի ձեզանից մեկը: Եթե ես վստահ լինեյի, որ կկարողանամ հասնել նրան, ապա անպատճառ կփորձեյի հանդիպել նրան, իսկ եթե հանդիպեյի, ապա անպատճառ կլվանայի նրա ոտքերը:»

Հետո նա պահանջեց տալ իրեն Ալլահի Առաքյալի (Խ.Ա.Ո.Ն) ուղերձը, որով Դիհյան եկել էր Բուրսայի կառավարչի մոտ և նա տվեց այն Հերակլին, ով ընթերցեց այնտեղ հետևյալը.

Ամենագթասիրտ, Գթառատ Ալլահի անունով.

Մուհամեդից, Ալլահի ստրուկից և առաքյալից, Հերակլին, Ռումայի տիրակալին:

Խաղաղություն նրան, ով հետևում է ճիշտ ուղղուն:

Հետո, իրոք, ես կոչում եմ քեզ Իսլամի: Ընդունիր Իսլամ և դու կփրկվես, իսկ Ալլահը կկրկնապատկի քո պարգևը, եթե դու մերժես, ապա քո վրա կլինի քո գյուղացիների մեղքը: Եվ ես, կասեմ քեզ այն, ինչ ասել է Ալլահը: «**Ասա. «Օ, Գրերի մարդիկ: Եկեք ճանաչենք խոսքը, որը նույնն է մեզ և ձեզ համար, որ չպետք է մենք խոնարհվենք ոչ ոքի բացի Ալլահից, և որ չպետք է դնենք Նրան գործընկեր, և որ ոչ ոք մեզանից չի համարի ուրիշին Աստված Ալլահին հավասար:« Իսկ եթե նրանք մերժեն, ապա ասա.» Վկայեք, որ մենք հաղորդողներ ենք**:»»[49]

Աբու Սուֆյենը ասաց, «Երբ Հերակլը ավարտեց ընթերցել այս ուղերձը, ասելով այն, ինչ ասաց, նրա ժողովում բարձրացավ աղմուկ և մեզ հանեցին այնտեղից, որից հետո ես ասեցի իմ

[49] Ղուրան 3:64

ընկերներին. «Իբն Աբու Քաբշան դարձել է այնքան կարևոր մարդ, որ նրանից վախենում է նույնիսկ բանու –ալ- ասֆար տիրակալը:« Դրանից հետո ես համոզված էի, որ նա կհաղթանակի և արդյունքում Ալլահը բերեց ինձ առ Իսլամ:«

(Այս հադիթի պատմողը ասաց.)« Իբն ան- Նատուրը Իլիյիյի կառավարիչն էր, իսկ Հերակլը հանդիսանում էր Շեմի քրիստոնյաների եպիսկոպոսը: (Իբն ան- Նատուրը) հաղորդում է, որ մի անգամ, գալով Իիյա, Հերակլը արթնացավ առավոտյան այնքան վատ տրամադրությամբ, որ որոշ նրա երեցներից ասացին, « Մեզ դուր չի գալիս քո տեսքը:»

Իբն ան- Նատուրը ասաց. « Հերակլը աստղաբան և պայծառատես էր և ասաց նրանց ի պատասխան իրենց հարցին (վատ տրամադրության մասին). « Հետևելով աստղերին այս գիշեր, ես տեսա, որ թլպատում կատարող տերը հաղթանակեց, (և ես ուզում եմ իմանալ), ովքե՞ր են մարդկանցից անում թլպատում:» Նրան պատասխանեցին, « Ոչ ոք, բացի հրեաներից, բայց նրանք չպիտի անհանգստացնեն քեզ: Ուղարկիր ուղերձ քո թագավորության տարբեր քաղաքներ, որ այնտեղ սպանեն բոլոր հրեաներին:» Այդ ժամանակ Հերակլին բերեցին մի մարդու, որին ուղարկել էր հասանիդների կառավարիչ, որպեսզի հաղորդի նրան Ալլահի առաքյալի (Խ.Ա.Ո.Ն) մասին լուր:

Հարցաքննելով սուրհանդակին, Հերակլը հրամայեց (իր ծառաներին). « Մոտեցեք և ստուգեք, թլպատված է նա, թե ոչ:» Նրանք նայեցին (սուրհանդակին) և հաղորդեցին Հերակլին, որ վերջինս թլպատված է և այդժամ Հերակլը սկսեց հարցնել նրան արաբների մասին: (Սուրհանդակը) ասաց. « Նրանք (նույնպես) անում են թլպատում:» (Լսելով նրան), Հերակլը ասաց, «(Հիմա) պարզվեց, որ կառավարումը կպատկանի նրանց:» Հետո Հերակլը գրեց նամակ Ռումյա, իր ընկերոջը, ով ուներ նույն գիտելիքները, ինչ նա, որից հետո մեկնեց Հիմս և չհեռացավ քաղաքից այնքան ժամանակ, մինչ չստացավ իր ընկերոջից պատասխան ուղերձ, որում նա գրում էր

, որ կիսում է Հերակլի կարծիքը մարգարեյի հայտնության մասին և այն որ , նա իրոք հանդիսանում է մարգարե : Դրանից հետո Հերակլին կանչեց Ռումայի հայտնի մարդկանց իր պալատ Հիմսում , և երբ նրանք հավաքվեցին , հրամայեց կողպել դարպասները : Հետո նա դուրս եկավ նրանց մոտ և ասաց. « Օ, բյուզանդացիներ , Եթե դուք ցանկանում եք հաջողակ լինել և ճշմարիտ ուղղու կանգնել և ցանկանում եք , որ ձեր թագավորությունը կանգուն մնա , երդվեք այս մարգարեյին :»

(Լսելով այս խոսքերը), նրանք , վայրի ավանակների նման , շտապեցին դարպասների մոտ , բայց տեսան , որ դարպասները փակ են : Հասկանալով , որ իրենց ատելի են (նրա խոսքերը), և կորցնելով հույս այն բանի , որ նրանք կհավատան , (Հերակլը) հրամայեց .« Բերեք նրանց ինձ մոտ » (և երբ նրանք վերադարձան), նա ասաց . « Ճշմարիտ , ես ասեցի դա միայն նրա համար , որ փորձեմ ձեր հաստատակամությունը ձեր կրոնում , իսկ հիմա ես համոզվեցի (դրանում) :» Եվ այդ ժամանակ նրանք խոնարհվեցին (Հերակլի) դեմ մինչև գետին , քանի որ գոհ մնացին նրանից , և սա վերջինն էր , ինչ կապում էր Հերակլին (Իսլամական կրոնի հետ):»»[50]

Ողջ փառք Ալլահին՝ աշխարհների Աստծուն:

Եվ թող Ալլահը մեծարի Նրա մարգարեի մասին հիշատակելն ու պահպանի նրան բոլոր նվաստություններից:

[50] Բուխարի 1/10

الحمد لله رب العالمين

وصلى اللهم على أشرف المرسلين وعلى آله وصحبه أجمعين

Փառք Ալլահին՝ աշխարհների Աստծուն:

Ես խնդրում եմ Նրանից

Շնորհակալություն հայտնել և պահպանել

Ամեն չարիքից մեր մարգարե Մուհամմեդին,

Նրա ընտանիքին, հետևորդներին և բոլոր նրանց,

Ովքեր ճշմարտության ճանապարհին հետևեցին

Նրան:

www.thekeytoislam.com

www.islamland.com

www.islamhouse.com

www.sultan.org

www.islamic–invitation.com